

8887

հ. ՊՈԼՔԵՆ

Մանուկանոց

Նագիթաշինչի

ԽՆԴԻԴՆԵՐԸ

Կոմկոմսոմ 1933

3 К П 4

7-81

24 JUL 2013

ՅՔՈԿ
Ռ-ՅԻ

Պրոլետարների բոլոր լեռերների, սխալով 24 SEP 2008

Ռ. Գ. ՌՈՒԲԵՆ

08 DEC 2009

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1008
2517-38591

- 1) Ընկ. Ռուբենի լեռույքը Բագվի ագիտարների կոնցերանսում 28/VI 33 ք.
- 2) «Բոլշևիկյան սեմպերի համար» (Նույնը ագիտացիայի մասին) Մոսկվա 1930 ք.

~~3085~~
4154

~~3085~~



ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Բազմի ազիտատորների խորհրդակցութիւնում արտասանած ճառը
28/VII 1933 թ.)

Սոցիալիստական շինարարութեան համար մղվող պայքարում մասսայական քաղաքական ազիտացիայի խնդիրները այսօր ել ահտուալ են հանդիսանում:

Պատահական չէ, վոր կուսակցութեան Բազմի Կոմիտեն այս հարցին խոշոր նշանակութիւն է տալիս:

Յեթն վերցնելու լինենք բոլշևիկյան կուսակցութեան ամբողջ պատմութիւնը, նրա պայքարի պատմութիւնը, ապա կտեսնենք, վոր մեր կուսակցութիւնը, ազիտացիայի, պրոպագանդայի հարցերին իր պայքարի բոլոր ետապնելումն էլ առաջնակարգ կարևոր նշանակութիւն է տվել:

Յեվ այսօր, յերբ մեզ մոտ կուսակցութիւնը ծավալուն Ֆրոնտով սոցիալիստական հասարակարգ է կառուցում, յերբ այս Ֆրոնտում կուսակցութիւնը մեկը մյուսի հետեւից հաղթանակներ է տանում—քաղաքական մասսայական ազիտացիայի հարցերը որակարգից չեն հանվում: Քաղաքական մասսայական ազիտացիայի հարցերը յերբեք չի կարելի անջատել սոցիալիստական շինարարութեան կոնկրետ խնդիրներից:

Ազիտացիայի տարբեր խնդիրներ է դրել կուսակցութիւնը, յերբ նա կովում էր իշխանութիւնը գրավելու պրոլետարական դիկտատուրայի համար: Ուրիշ խնդիրներ դրվեցին, յերբ կուսակցութիւնը հաղթանակ տարավ, պրոլետարական դիկտատուրան հաստատելով, յերբ կուսակցութիւնը պայքարում էր քաղաքացիական կոնիվերում:

Այա վերականգնման շրջանում, վերակառուցման շրջանում, սոցիալիստական ծավալուն շինարարութեան շրջանում ամեն անգամ յուրաքանչյուր տարբեր շրջանում տարբեր ձևով են դրվել քաղաքական ազդեցության հարցերը: Սակայն, այդ հարցի ակտուալ և նշանակալից լինելը միշտ յեղել է անվիճելի:

Յեվ դժբախտութիւնը նրանումն է, վոր մեզ մոտ հաճախ թերազնահատում են և չեն հասկանում քաղաքական մասսայական ազդեցության նշանակութիւնը մասսաների մեջ մեր կուսգաստիարակչական աշխատանքի վողջ սխտեմուն:

Լենինը գրել է—

«Կոմունիզմը պետք է հանրամատչելի դառնա յուրաքանչյուր բանվորին, վորպես իր սեփական գործը: Մենք ձեռք կբերենք այն ինչ հարկավոր է, կհաղթահարենք բոլոր արգելքները, վորոնք մնացել են հին հասարակարգից, և վորոնք միանգամից դեն շարտել չի կարելի, պետք է վերադաստիարակել մասսաներին, իսկ վերադաստիարակել նրանց կարող է միայն ազդեցության և պրոպագանդան: Մահաբաժնուտ է մասսաներին առաջին հերթին կապել ընդհանուր տնտեսական կյանքի շինարարութեան հետ»:

Ահա ձեզ Լենինի ցուցմունքը այն մասին, թե ինչ նշանակութիւն ունի ազդեցության սոցիալիստական շինարարութեան համար մղվող պայքարում:

Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի մենք կարողանանք կուսակցութեան լողունները մասսաներին հասցնել:

Խնդիրը կայանում է նրանում, վոր մենք ձեզ հետ միասին այդ լողունները կարողանանք հասցնել պրոլետարական և աշխատավորական լայն մասսաներին և բացատրել նրանց այդ լողունները:

Լենինն իր ժամանակին համեմատել է ազդեցության մեր յերկրում, վորտեղ իշխում է պրոլետարիատը վորտեղ դեկավարում է մեր կուսակցութիւնը, բոլշեիկները կուսակցութիւնը, բուրժուական ազդեցության հետ: Նա ասել է,

վոր մեր ազդեցության նշանակալից լինելը նրանումն է կայանում, վոր մեզ մոտ ազդեցության պարզ է լինի հետադիմ:

Պարզութիւնը և ճշմարիտ լինելը բոլշեիկյան ազդեցության անհրաժեշտ տարրերն են: Առանց նրան, վոր մեր ազդեցության լայն աշխատավորական մասսաների համար պարզ լինի, առանց նրա ճշմարիտ լինելուն, նա չի կարող բոլշեիկյան ազդեցության լինել: Հիտլերը և Գիբելը վորոնք ֆաշիստական Գերմանիայում գլխավորում են ֆաշիստական ազդեցության, առանց ատելութեան չեն կարող նայել այն բանին, թե ինչպէս բոլշեիկները տիրում են ազդեցության գեներին, նրանք վորձում են մեզանից սովորել ազդեցության մեթոդները: Բայց բանը նրանումն է, վոր բոլշեիկյան ազդեցության բուրժուական ազդեցությանից տարբերվում է նրանով, վոր նա պարզ է և ճշմարիտ: Այն ժամանակ, յերբ բուրժուազիան և նրա ֆաշիստական ավանգարդը ստիպված են իրենց ազդեցություն աշխատանքը կառուցել աշխատավորութեան խարեյութեան, կեղեքման և շահագործման սկզբբունքները վրա, մենք մեր ազդեցություն աշխատանքներում միշտ ել բարձր կանգնած կլինենք, վորովհետև մեզ մոտ ազդեցության պարզ է և ճշմարիտ, վորովհետև մեր ազդեցության ծառայում է սոցիալիստական շինարարութեան մեծ գործին, ամբողջ աշխարհի աշխատավորութեանը կապիտալիստական ստրկութիւնից և շահագործումից ազատելու գործին:

Ընկ. Ստալինը ասել է «Հեղափոխութեան հաղթանակի համար, յեթե այդ հեղափոխութիւնը իրոք ժողովրդական է և ընդգրկում է միլիոնավոր մասսաների, միմիայն ճիշտ կուսակցական լողուններ դեռ բավական չեն: Հեղափոխութեան հաղթանակի համար պահանջվում է մի անհրաժեշտ պայման ևս այն է՝ վորպեսզի ինքը մասսան սեփական վորձի հիման վրա համոզվի, վոր այդ լողունները ճիշտ են»:

Կուսակցութիւնը լողունը է տալիս, բայց այդ դեռ բուրժուական էլ բավական չէ սոցիալիստական շինարարութեան համար մղվող պայքարում, հեղափոխութեան հաղթանակի համար մղվող պայքարում: Ըստ Ստալինի պետք է վոր այդ լողունները հասցվեն մասսաներին, վորպեսզի մասսաները

հասկանան և բմբուեն այդ լողունգները և այդ դեպքում կուսակցության լողունգները կդառնան մասսաների լողունգներ:

Ահա ձեզ ընկ. Ստալինի վճռական, ղեկավարող ցուցմունքը, այն մասին, թե ինչպես պետք է դրվեն քաղաքական մասսայական ագիտացիայի հարցերը: Խնդիրը նրանումն է, վոր կարողանալ ցույց տալ լավագույն որինակները և այդ լավագույն որինակներին հիման վրա առաջ քաշել հետ մնացողներին: Մեր ագիտացիան առաջիմա դեռ վատ է իրագործում այդ խնդիրը քաղաքում և հատկապես գյուղում: Մեզ մոտ քիչ չեն լավագույն որինակներ: Մեզ մոտ իհարկե շատ թերություններ ել կան: Մեզանում և բյուրոկրատական խեղաթյուրումներ ել կան:

Մեզ մոտ կան հետ մնացող տեղամասեր, և կան առաջավոր տեղամասեր: Մեզանում կան առաջավոր հարվածայիններ և ագիտացիայի խնդիրը կայանում է նրանում, վոր կարողանալ հարվածել վատը ու ցուցադրել լավը:

Հետևյալ հարցը, վորը պետք էր դնել—կայանում է նրանում, վոր մեր քաղաքական ագիտացիան և մեր ագիտատորները, վորակավոր ագիտատորները, ագիտատորները տեղեղում՝ ֆարրիկներում, գործարաններում և հանքերում յուրացնեն մի կանոն: Այդ կանոնը այն է, վոր գաղափարակն ագիտացիա մղել, հարձակում գործել նրանց վրա, վորոնք դուրս են գալիս կուսակցության լողունգների դեմ, կուսակցության գծի դեմ, նրա գործնական քաղաքականության դեմ: Հարձակում գործել նրանց դեմ, ովքեր տապալում են աշխատանքի բոլշևիկյան տեմպերը, ով հանդիսանում է կամավոր կամ անկամ զենք դասակարգային թշնամու ձեռքին:

Քաղաքական հարձակումը հանդիսանում է քաղաքական և մասսայական աշխատանքի մեջ ամենից ավելի անհրաժեշտ ողակը: Մենք մասսաների ցատումը պետք է բարձրացնենք թշնամիների դեմ, իսկ թշնամիները մեզ մոտ քիչ չեն: Յեվ գործարաններում և հանքերում այդպիսիները կան:

Յեվ վերջապես խնդիրը նրանումն է, վոր մասսաների քաղաքական մակարդակը բարձրացնենք մինչև այն խնդիր-

ների աստիճանին, վոր մեր կուսակցությունն է մեր առաջ դնում սոցիալիստական շինարարության կոնկրետ տեղամասերում: Դեռևս 1900 թվին Լենինը գրել է. «ոժանդակել բանվոր դասակարգի քաղաքական աճմանը և քաղաքական կազմակերպմանը.—մեր գլխավոր, հիմնական խնդիրն է. նա ով այս խնդիրը հետին պլանն է դրում, ով բոլոր մասնավոր խնդիրները և պայքարի առանձին պրեդյանները չի յենթարկում նրան՝ նա, սխալ ճանապարհի վրա յե կանգնում, նա լուրջ հարված է հասցնում շարժմանը»:

Այսպիսով ամբողջովին անվիճելի յե, վոր քաղաքական ու մասսայական ագիտացիայի հարցերը ամենուրեք հրատապ և ակտուալ են: Յեթե յես այսոր ձեր առաջ հարց դնելու լինեմ—մեզ մոտ Բագվում քաղաքական ագիտացիայի մակարդակը համապատասխանում է արդյոք այն խնդիրներին, վորոնք դրված են Բագվի կազմակերպության, Բագվի պրոլետարիատի առաջ, այս յես, դժբաղդաբար, պետք է պատասխանեմ, վոր այդ մակարդակը ցածր է, վոր ագիտացիան անվիճելիորեն հետ է մնում այն խնդիրներից, վորոնց մեզ է առաջադրում մեր կուսակցությունը: Մենք Բագվում հետ ենք մնում: Բագուն խոշոր արդյունաբերական կենտրոն է: Բագվի առաջ խոշոր պետական նշանակություն ունեցող խնդիրներ են դրված: Մենք այստեղ բանվորության տարբեր շերտեր ունինք և հին պրոլետարներ և բանվորների նոր շերտեր, ինժեներ-տեխնիկական անձնակազմի խոշոր կազմեր:

Խնդիրը նրանումն է, վոր քաղաքական ագիտացիայի խնդիրներին, այս ուղղությամբ մեր առաջ կանգնած խնդիրներին, մակարդակը կարողանանք ամենամոտ ժամանակներում այնքան բարձրացնել, վոր նա համապատասխանի այն պահանջներին, վոր կուսակցությունն է առաջադրում, յերկիրն է առաջադրում, կուլտուրապես զարգացող պրոլետարն է առաջադրում:

Ինչո՞ւ այդպիսի հետամնացություն գոյություն ունի, ինչո՞ւ այդ ներկայումս անհանդուրժելի յե: Վոչ մի որ չըկորցնելով, անհրաժեշտ է ձեռք դարկել այս հարցերին այնպես, վոր կարողանանք ամբողջ Անդրկովկասի համար այս

աշխատանքում որինակներ ցույց տալ: Մեր Բագվի պրոլե-տարական կազմակերպութուններին իրավացիորեն պահանջ-վում է, վոր մենք որինակներ ցույց տանք կուսակցական, տնտեսական, խորհրդային և այլ աշխատանքների բոլոր բնագավառներում:

Հետ մնալը անհանդուրժելի յե, վորովհետև մենք վորոշ կտրվածութուն ունենք մեր քաղաքական ազիտացիայի և բանվորական մասսաների կուլտուրական մակարդակի ու ակտիվության աճման միջև: Բանվորը աճում է, բանվորը պահանջում է վոր իր բոլոր հարցերին վորոնց ինքն է դը-նում, պատասխաններ տրվեն: Սյուպիտով մասսայական-քա-ղաքական ազիտացիոն աշխատանքի ներկա դրույթը վոչ մի կերպ չի բավարարում բանվորին:

Կուլտուրայես աճած պրոլետարը որինական կերպով մեզանից պահանջում է, վոր մենք, վորպես կուսակցական կազմակերպութուն, ըջիջ, ուսյոմ, Բագվոմ նրա հարցերին վոչ թե ընդհանուր պատասխաններ տրվին, այլ կոնկրետ կերպով բացատրվեն: Յեվ յեթե համեմատելու լինենք թե ինչպիսի պահանջներ ունին մեր բանվորները միջազգային և ներքին քաղաքականության բոլոր հարցերի վերաբեր-մամբ այն բանի հետ, թե ինչպես են բանվորին բացատրում, պատասխանում նրա հարցերին, մենք այստեղ կտեսնենք խո-շոր մկրատ:

Այս կտրվածութունը հետագայում անհանդուրժելի յե: Այդ անհանդուրժելի յե, վորովհետև ինչպես ասացինք, գոյութուն ունի կտրվածութուն քաղաքական ազիտացի-այի և այն տնտեսական, քաղաքական ինդիւրների միջև, վորոնք դրված են Բագվի կազմակերպության առաջ:

Քաղաքական ազիտացիայի լավագույն որինակներ կան, վոր տալիս է Մոսկվայի կազմակերպութունը: Յեվ այդ տե-ղի յե ունենում ընկ. Կազանովիչի դեկավորությամբ, վորը միշտ քաղաքական ազիտացիայի հարցերին առաջնակարգ ուշադրություն է դարձնում և միշտ արժեքավոր ցուցմունք-ներ ու հրահանգներ է տալիս: Ինչու աշխատանքի այս որի-նակները մենք չպետք է վերցնենք և տեղափոխենք մեզ մոտ, Բագվի կազմակերպութունը:

Յեթե ազիտացիայի հարցերը քննության առնելու լի-նենք սրվող դասակարգային պայքարի լույսի տակ, — իսկ դասակարգային պայքարը սրվում է, ապա կտեսնենք, վոր այստեղ ազիտացիայի հետ մնալը հատկապես անհանդուր-ժելի յե:

Թշնամին միշտ շոշափում է մեր թույլ տեղերը և այնտեղ, ուր մենք չենք իմանում ինչպես հարկն է աշխատել, այնտեղ ուր մենք չենք կարողանում ինչպես հարկն է բանվորին բացատրել, այնտեղ փորձում է «բացատրել» թշնամին: Թըշ-նամին, վորը խցկվել է գործարան, վորը ամեն տեղ է լի-նում մեզ մոտ Բագվում, թշնամին, վորը մեր գյուղումն է գտնվում, նա նույնպես մեր դեմ ազիտացիայի հարցերը շատ կոնկրետ է դնում:

Թշնամին ոգտագործում է բանվորների առանձին խմբե-րի հետամնաց արամաւորութունները և նա բոլոր մեր միջո-ցառումները աշխատում է բացատրել այնպես, վոր այդ բացա-տըրվի մեր դեմ: Ահա թե ինչու այս պայմաններում ազիտա-ցիայի հետ մնալը բոլորովին անհանդուրժելի յե և ահա թե ինչու մեր Բագվի կազմակերպութունը պետք է հարվածի քաղաքական ազիտացիայի այն թերագնահատմանը, վորը գոյութուն ունի մեզ մոտ: Պետք է ասել, վոր մեզ մոտ շատ թեթև են գնահատում ասենք այսպիսի մի փաստ— բանվորական ժողովի սապալումը: Բանվորները հավաքվում են, սպասում են զեկուցողին, իսկ նա չի ներկայացել: Ժո-ղովը ցրվում է:

Ի՞նչ է նշանակում վիժեցնել բանվորների ժողովը: Բան-վորները հավաքվում են, վոր դուք նրանց կոնկրետ կեն-սական հարցերին, վորոնք նրանց հետաքրքրում են պատաս-խաններ տաք:

Մեր աշխատանքի մեջ ազելի քան վատթար բան չի կա-րող լինել, քան բանվորական ժողովի տապալումը, իսկ մեզ մոտ այդպիսի դեպքեր տեղի յեն ունեցել: Ի՞նչ է նշանա-կում սա:

Սա նշանակում է, վոր մեզ մոտ մարդիկ, հաճախ և պա-տասխանատու աշխատողները չեն հասկանում այս հարցի նշանակութունը, չեն հասկանում թե ինչպիսի տրամա-

դրուած յայն և հետ զնում այն բանվորը, վորը այն հարցին, վորը նա ցանկանում եր տալ ժողովին, մեզանից վոչ մի պատասխան չի ստացել:

Անհրաժեշտ ե վճռականորեն հարվածել այդ թերագնահատումը: Ահի (բ) Բագլումը վորոշել ե, վոր Հնայելով անձնավորութեան՝ բանվորական ժողովները տապալուղները յենթարկվելու յեն խտտագույն կուսակցական պատասխանատրվութեան:

Բաղաքական ազիտացիան մեր կուսակցութեան ձեռքում սոցիալիստական շինարարութեան համար մղվող պայքարում հզոր գննք ե. այս իսկ պատճառով Բագլի կազմակերպութեանը ինչ զնով ել լինի պետք ե հաղթահարել վերոհիշյալ հետ մնալը:

Վորպեսզի այս բոլորը դատարկ Ֆրագ չլինի, վորպեսզի պարզ լինի թե դա ինչ հետ մնալ ե, և թե ինչպես պետք ե հաղթահարել այն, անցնում եմ կոնկրետ հարցերին:

Ի՞նչու մեզ մոտ տեղի ունի հետ մնալը:

Ի՞նչու զարգացող ինդուստրիայի դարում, մեքենայացման, տրակտորիզացիայի դարում ազիտացիան հաճախ պոչից ե քաշ գալիս, վորպես ամենահնացած սայլ:

Որինակ. մի քանի մթերքների գները բարձրացվում են, մի հարց, վորը հետաքրքրում ե բանվորներին: Ներկայումս բանվորներին հետաքրքրում ե նավթի բարձրացումը. սակայն վորեք մեկը բացատրել ե բանվորներին թե ի՞նչու: Վոչ. վոչ. վոչ չի բացատրել: Իսկ դրա համար մենք ունենք Բագլումի ազիտաստեղծին, ռայկոմների ազիտաստեղծիները մենք ունենք ազիտատորների շտատ և ընդհանրապես մարդիկ քիչ չեն— կուսկոմների քարտուղարները, բՆԻՆների քարտուղարները և այլն:

Նրանցից ամեն մեկը հանդիպում ե այնպիսի փաստի, յերբ հիմնարկում բանվորը հարց ե տալիս, իսկ նրան վոչ վոչ խելահաս չի պատասխանում: Ինչ ե նշանակում սա: Սա հենց հետ մնալ ե, ամենից ավելի խայտառակ կերպով հետ մնալ, վորովհետև յեթե մենք բանվորին չենք բացատրել, ապա մի ուրիշը իր դասակարգային շահերի տեսակետից անպայման «կբացատրի» նրան:

Շուտով սկսվելու յե հացի ազատ վաճառք: Բագլում շատ կետերում և՛ կենտրոնում և՛ տեղերում բացվելու յե հացի ազատ վաճառք. մի հարց, վորը ի հարկե հետաքրքրում ե բանվորներին:

Յես հարց եմ տալիս, ի՞նչ ե արել մեր ազիտացիան, վորպեսզի բացատրի բանվորին թե ինչ ե հացի ազատ առևտուրը, ինչո՞ւ յե այն մտցվում, ի՞նչպիսի նշանակութուն ունի այդ միջոցառումը:

Ի՞նչու մեր ազիտացիայի ապաբառը, վորը կոչված ե այս գործով զբաղվելու, ձեռք չի խփում այս հարցին, ի՞նչու չի սրում լսողութեանը: Յես համոզված եմ, վոր մինչև այժմ վոչ մեկը մտածված կերպով չի պատմել բանվորներին, վոր մեզ մոտ հացի ազատ առևտուր ե սկսվում, նույնիսկ այստեղ նստած վոչ բոլոր ազիտատորները իմանում են այդ (ծիծաղ): Արդո՞ք ճիշտ ե դա, թե վոչ: (ձայներ՝ ճիշտ ե) Իսկ առավոտը զարթնելուց հետո կտեսնի վոր խանութներում հաց են ծախում: Նա կգա հիմնարկութուն և նրան բանվորները կհարցնեն՝ ինչ նշանակութուն ունի հացի ազատ առևտուրը: Այդ ազիտատորը կպատասխանի «Յես ինքս ել առ այժմ չգիտեմ»:

Յեվ դուք կարծում եք, վոր դա ազիտատորի հանցանքը կլինի: Վոչ: Այդ առաջին հերքին մեր հանցանքն ե, այն մարդկանց հանցանքը, վորոք կոչված են Բագլումից յեվ ռալոններից այդ ազիտատորներին դեկավարելու:

Վերջերք անցազրային սիստեմի անցկացումը: Չի կարելի ասել վոր աշխատանքի առաջին շրջանը կազմակերպված եր այնպես, վոր ազիտացիայի միջոցով հարցը մասսաներին բացատրվեր ինչպես հարկն ե: Բագլումին վիճակից աշխատանքի պրոցեսում միջամտել, վորպեսզի լուծվի բացատրական աշխատանքների հարցերը:

Կարելի յե բերել տասնյակ որինակներ այն մասին, թե ինչպես մեր ազիտացիոն-մասսայական աշխատանքը հետ ե մնում:

Յես գիտեմ նաև շատ փաստեր, յերբ մեր ազիտատորները տեղերում ոգնութուն չեն ստացել, չիմանալով ինչպես ճիշտ պատասխանել տրված հարցերին, տալիս են ամե-

նից ավելի անհեթեթ պատասխաններ և այդ վոչ թե իրենց հանցանքով:

Զգիտեն, կամ բոլորովին չեն պատասխանում, վորը վատ ե, կամ պատասխանում են սխալ—դա ավելի վատ, իսկ բան-վորին դա չի բավարարում: Ահա թե ինչի յե հանգեցնում ազի-տացիայի հետ մնալը: Դա հասարակ հարց չի. դա մեր ամե-նորյա կոնկրետ աշխատանքների մեջ ամենից ավելի կեն-սական հարց ե:

Խնդիրը նրանումն ե, վոր մենք ինքներս վերևից ներքև գործը պետք ե այնպես կազմակերպենք, վորպեսզի յեթե բանվորի մոտ վորև ե սուր հարց ե ծագում Բագվի կոմիտե-յի և ռայկոմների ազիտաստեժինները կարողանան հավա-քել պրոպագանդիսաներին, բացատրել նրանց, վոր ամբող-ջությամբ զինված, միշտ գործարաններում, ֆաբրիկնե-րում, հանքերում ազիտակոլեկտիվներ ղեկավարները լինեն: Ազիտատորները առաջին հերթին պետք ե իմանան ինչպես պատասխանել այն հարցերին, վորոնք ծագում են կամ վա-ղը կարող են ծագել բանվորները մեջ:

Յեա Մոսկվայի պրակտիկայից ձեզ մի որինակ կրերեմ: Մի քանի մթերքների գների բարձրացում տեղի ունեցավ և այդ պետք եր բացատրել բանվորներին: Այս միջոցառումը կիրառվելու յեր ամսի մեկից, իսկ մեր առաջ քննության դրվեց նախորդ ամսի 30-ի յերեկոյան: Ինչպես մենք բացա-տըրական աշխատանք սկսեցինք: Մենք ուշ յերեկոյան հավա-քում ենք ազիտատորների ակտիվը Մոսկվայի կոմիտեյում և բացատրում ենք, վոր կուսակցության և կառավարության այսպիսի մի միջոցառում ե անցկացվում և վոր այդ անհրա-ժեշտ ե բացատրել բանվորներին:

Յուրաքանչյուր ազիտատորի առաջ մենք կոնկրետ խըն-դիր դրինք—դու այսոր յերեկոյան անձամբ այս խնդիրը պետք ե բացատրես վոչ պակաս կուսակցության 10 անդամի: Այնքան, վորքան, մենք հավաքել եյինք 600 հոգի, բազմա-պատկեցեք 10-ով և կսացվի 6000:

Մյուս որը մենք հավաքում ենք ղեկավար ազիտատոր-ներին ըստ ռայոնների և ասում ենք նրանց.—Ամսի 31-ին առավոտ մենք ձեզ հայտնու մ ենք, 31-ին յերեկոյան ձեզա-

նից յուրաքանչյուրը պետք ե այդ գործի մասին հայտնի 15-20 ակտիվ ընկերներին: Այդպիսով, ամսի 1-ին մենք ունեցանք 15-20 հազար մարդ, յեթե վոչ ավել, վորոնք կարողացան պատասխանել բանվորներին այս հարցի վերա-բերմամբ:

Ամեն ինչ կախված ե նրանից թե ինչպես ես գործը կազ մակերպում, ամեն ինչ կախված ե նրանից, վոր պետք ե հասկանալ քաղաքական ազիտացիայի նշանակութունը:

Մեզ պետք, վոր մեր ազիտացիան լինի մարտական, ոպե-րաշիվ ազիտացիա. իսկ ոպերատիվ լինել նշանակում ե հետ չմնալ, դա նշանակում ե, վոր ազիտացիան պիտի կարողանա իր ժամանակին վերակառուցվել և կառուցվել այնպես, վոր բանվորներին միշտ իր ժամանակին մենք կարողանանք պատասխան տալ այն հարցերին վորոնք նրանց հետաքըրը-րում են:

Մեզ մոտ ազիտացիոն աշխատանք իհարկե տարվում ե, մասսայական աշխատանքը հաճախ վատ չի տարվում: Բայց յես չեյի ասի վոր մեզ մոտ մարտական, ոպերաշիվ ազիտացիա գոյություն ունի. այդ, մարտական և ոպերատիվ ազիտացիա: Հենց այդ ե վոր չկա: Իսկ մենք այդ պետք ե ստեղծենք:

Յեթե դուք հարց տաք ով ե պատասխանատու այդ բանի համար, յես կպատասխանեյի.—դրա համար առաջին հերթին պատասխանատու յեն նրանք, ովքեր պարտավոր են կազմակերպել ազիտացիան, ովքեր պարտավոր են կազմակեր պել գոնե մարդկանց այն կազրերը, վորոնք նստած են այստեղ: Կազմակերպել նրանց, վորպեսզի մենք ֆաբրիկնե-րում, գործարաններում, հիմնարկներում ամեն տեղ, ամեն ուրեք, վորտեղ պահանջվում ե կազմակերպել քաղաքական ազիտացիա, ունենայինք լավ ակտիվ առաջավոր ազիտատոր-նե, վորոնք այդ տեղ հանդիսանային պրոլետարական տրի-բուններ: Յերը ծագում ե վորևե սուր քաղաքական հարց, մեր ազիտատորները, վորոնցից շատերը այստեղ ներկա յեն, փորձում են անցնել այդ սուր հարցերի վրայով:

Բանվորի մեջ սուր հարց ե ծագում—մատակարարման պակասութունը: Մեզ մոտ վոչ բոլոր ղեպքերումն ե ամեն ինչ բավականանում: Մենք ղժվարություններ ունինք:

Մեր դժվարութիւնները—անման դժվարութիւններ են: Արագ թափով աճող սօցիալիստական շինարարութեան դժվարութիւնները, դժվարութիւններ են, վորոնք հաղթահարվում են, մեր կողմից պայքարի ընթացքում, դժվարութիւններ վորոնց մենք անվիճելիորեն հաղթահարում ենք:

Յեւ ահա յերր հիմնարկում վորեւ սուր հարց ե ծագում ապա մեր ագիտատորը մեկ մեկ ցանկանում ե անտեսել այդ «անդուրեկան» սուր հարցը, վորը տալիս են նրան:

Որինակ հիմնարկում սովորական ժողովում հարց են տալիս թե ինչո՞ւ բանմատակարարման գործը մեզ մոտ դեռ ևս լավ չի, իսկ այ այս ինչ գործարանում այսինչ հանքում լավ ե, ինչո՞ւ մեզ մոտ վատ ե: Մեկ մեկ մեր ագիտատորը գրավում ե պաշտպանողական դիւբեր յեւ սխալմ ե պաշտպանվել: — Գիտեք ընկերներ, մենք գործարաններ ենք կառուցում, մեզ մոտ ինդուստրիալիզացիա յե, մենք հարկարդված ենք, մի քիչ համբերեցեք. փոխանակ քաղաքականապէս, գաղափարապէս հարձակվելու, գրավում ե պաշտպանողական դիրքեր. իսկ հաճախ պատահում ե այսպէս՝ գոփողը հարձակվում ե իսկ մեր ագիտատորը պաշտպանվում: Բոլշեւիկիյան ագիտատորը պե՞տ ե կարողանա յեւ հասնի դեմ գնալ: Պետք ե բացատրել ինչո՞ւ մենք բանմատակարարման մեջ հավասարենցում չենք կարող մտցնել. բացատրել այս ըստ եյուրթյան ինչպէս դա մեր կուսակցութեան գծից ե ըլխում. պետք ե նրանց առջ, վորոնք այդ հարցն են առաջադրում կոնկրետ խնդիր դնել.— իսկ ինչ եք արել դուք բանջարանոցների համար մղվող պայքարում, իսկ ինչ ե արել ձեր հիմնարկութիւնը այն հրահանգների կիրառման համար, վորպէսզի լավ աշխատի բանմատարժինը, կամ կոոպերատիւ կազմակերպութիւնը, ինչ ե արված աշխատանքի մեջ յեղած թերութիւնները վերացնելու համար: Յեւ վերջապէս, դժվարութիւնների պատճառները պե՞տ ե կոնկրետ կերպով բացատրել յեւ վոչ թե ընդհանուր ձեւով: Յեւ ահա փոխանակ գաղափարական հարձակում գործելու, հարձակողական դիրք բռնելու, մեզ մոտ պաշտպանողական դիրք են գրավում և սրանով իսկ վոչ միայն չեն կատարում բոլշեւիկյան ագիտատորի դերը, այլ կոչը են տալիս գոփողների և լողըր-

ների ձեռքը, վորոնք փորձում են ոգտագործել բանվորների առանձին խմբերի հետամնաց տրամադրութիւնները: Կարելի յե բազմաթիւ փաստեր բերել, թե ինչպէս հաճախ մեզ մոտ չեն կարողանում բացատրել մեր աճման դժվարութիւնները, չեն կարողանում տալ մեր դժվարութիւնների վերլուծութիւնը, վորպէսզի բացորոշ և ուղղակի բանվորների առջ այդ մասին ասվի—:

Ահա, «Մոնտինի» անվան գործարանում բանվորները գյուղից մի շարք նամակներ են ստանում:

Այս նամակներում պարզորեն արտահայտվել են կուլակային տրամադրութիւնները:

Բլջի քարտուղարին ասում են, վոր այդպիսի տրամադրութիւններ կան, նամակներ կան, բանվորներին պետք ե պատասխանել: Բլջի քարտուղարը պատասխանում ե:

«Ստանան տանի փաստերը չես հերքի հավանական ե վոր այդպիսի փաստեր գյուղերում կան»: Յեւ դա նշանակում ե «գաղափարական հարձակողական դիրքեր գրավել»: Կուսակցութեան գլծը բացատրելու համար մղվող պայքարում վորպէսզի, բացատրել, թե ինչ ե կատարվում մեր գյուղում կուլակութեան դեմ մղվող պայքարում, ինչպիսի քաղաքական հարաբերութիւններ են ստացված մեզ մոտ գյուղում սոցիալիզմի համար մղվող պայքարի ներկա շրջանում,— ինչպէս ե գյուղում աշխատում կուլակը, բացատրվի թե ինչպէս ե ընկ. Ստալինը դրել գյուղին վերաբերյալ խնդիրները և այլն:

Սա, ընկերներ, քաղաքական ագիտացիայի ասպարիզում կոպիտ սխալ ե և միանգամայն անհանդուրժելի: Բոլշեւիկիյան ագիտացիան, այնպիսի ագիտացիա պիտի լինի, վորը, կրկնում եմ կարողանա յերբ հարկ ե, գնալ և հոսանքի դեմ:

Մի ուրիշ որինակ Շմիտզի գործարանից: Չուգունաձուլական ցեխում ագիտացիան այնքան վատ ե դրված, վոր վոչ վոք խելահաս, մտածված կերպով չի կարող բանվորներին բացատրել մի շարք հարցեր: Իսկ ցեխային բլջի քարտուղարը հայտարարում ե, վոր «կուսակցութեան յեւ կառավարութեան հիմնական միջոցառումները բացատրելով, նիւսն ասած մենք չենք զբաղվել: Այսպէս ցեխում ախտա-

վարձի անկանոնության հետեւանքով վաս սրամաղորոքյուն գոյություն ունի յեւ վիյեվուչունն և բանվարները մեք խոսքերին չեն հավասարու»:

Ահա ձեզ չուգունաձուլական ցեխի բջջի քարտուղար: Նա իհարկե մեղավոր ե. բայց դուք կարծում եք, վոր դա միայն նրա հանցանքն ե. դա և մեր հանցանքն ե: Մենք մեղավոր ենք այն բանում, վոր մենք վոչ միշտ ենք կարողանում մարդկանց ճիշտ դասավորել: չենք կարողանում բացատրական—մասսայական աշխատանքները կազմակերպել այնպես, վոր մեր ցեխային բջջի քարտուղարը, յեթե ցեխում անառողջ տրամադրությունների տարրեր կան առանձին բանվորների մեջ—ասենք աշխատավարձի նկատմամբ, վորպեսզի այդ քարտուղարը, ազիտատորը, և այլն կարողանային ճիշտ բացատրել և կազմակերպել գործը:

Յես դիտմամբ այս յերկու ուրինակները քարտուղարներին մասին բերի: Յեթե վերցնենք պրոֆմիտութենական աշխատողներին, նրանք հատուկ հաճույքով են պաշտպանվում: (ծիծաղ)

Մենք մեր ազիտատորներին գաղափարապես այնպես պետք ե զինենք, վորպեսզի նրանք լինեն իսկական բողջեկկյան ազիտատորներ, վորպեսզի նրանք մինչև իսկ ամենասուր հարցին, բանվորներին կարողանան ճիշտ պատասխան տալ և վոչ մի դեպքում չպաշտպանվեն, այլ միշտ բողջեկկորեն հարձակվեն: Դուք կարծում եք, վոր այդ հարցը պլանի համար մեր մղած պայքարում փոքր հմրց ե: Դուք կարծում եք, վոր այդ փոքր հարց ե, սոցիալիստական շինարարութեան համար մեր մղած կռիւրես պայքարում: Վոչ, դա խոշոր հարց ե, վորովհետև մենք պարտավոր ենք սպասարկել բանվորներին, պարտավոր ենք բացատրել այն հարցերը, վորոնք ծագում են նրանց մեջ: Բացատրութեան ժամանակ պետք ե կարողանալ կուլակին վորպես թշնամի, վորը խցկվել ե գործարան, հանք, մերկացնել, պետք ե կարողանալ չչփոթել թշնամուն մաքուր, բայց հետամնաց բանվորի հետ, վորին պետք ե բարձրացնել: Յես յեղաՉափարիձեյի անվան գործարանում: Մտա ճաշարան և հարցնում եմ ինչպես են գործերը:

Խոսեցի ծեր բանվորների հետ, ասում են վոր դրությունը համեմատաբար տանելի յե, իսկ մեկ-մեկ ել ասում են վոր վատ ե: Լսում եմ գոռգոռոց ե ճաշարանում. «Մա ինչ խայտառակություն ե. ինչու մեզ վատ ճաշեր են տալիս»: Յես խոյլ տվեցի նրան խոսել, իսկ հետո մոտեցա նրան և ասում եմ «ինչ ես բղավում»: Նա ասում ե «այս խայտառակություն ե մեզ մոտ» և այլն: Յեւ պրոֆմիտութենական և գործարանի մյուս աշխատակիցները վոչ մեկը դրան հակահարված չտվին, իսկ նա ամբողջ ճաշարանով մեկ գոռում ե (ծիծաղ): Յես նրան հարց եմ տալիս.—Ինչքան ժամանակ ե վոր գործարանումն ես աշխատում:



100
3858

—Մտո Տ—ամիս.—Իսկ առաջ հւր եյիր աշխատում:
—Առաջ միլիցիայում վորպես միլիցիոներ.—Իսկ ավելի առաջ—հարցնում եմ յես, պատասխանը բավականաչափ միգապատ ե: Ընդամենը Տ ամիս ե ինչ աշխատում ե, իսկ գործարանում բոլորից շատ ե բղավում: Յեւ տեղն ու տեղը յես նրան մերկացրի, իսկ մի քանի շրջապատողներ, վորոնք դեմ չեյին լինի այդ բղավողին լրացնել անմիջապես նրանից յերես դարձրին:

Մեզ մոտ բանվորական ժողովներում մեկ մեկ յելույթ ե ունենում ինչ վոր դեմագոգ, կամ ինչ վոր յենթակուլակ, կամ նա, ով գործարան ե խցկվել, և ճառ ե ասում վոչ վոք դրանց բողջեկկյան իսկական հակահարված չի տալիս:

Այդ բանը չի կարելի հանդուրժել: Մեր բողջեկկյան ազիտացիայից պահանջվում ե, վորպեսզի նա միշտ կարողանա իր ժամանակին գրավել գաղափարական բողջեկկյան դերքեր վորտեղ ել վոր լինի՝ բաց ժողով կլինի թե հանրապետականում, կամ ինչ վոր մասսայական հավաքում, կամ ինչ վոր ծխարանում այդ միևնույն ե: Յեթե դու բողջեկկյան ազիտատոր ես, պետք ե ամեն տեղ ել գաղափարական հարձակողական դիրք գրավես, մերկացնես, բացատրես յեւ միյան այդ դեպքում կլինես ազիտատոր:

Հետևյալ թերությունը, կարելի յե ասել ամենախոշոր թերությունը նրանումն ե, վոր մեր ազիտացիայի աշխատանքը, մեր մասսայական աշխատանքը չի իմանում դիֆերենցիալ կերպով մոտենալ այն միջավայրին, վորի հետ ինքը



գործ ունի: Չե վոր վերջ է վերջո բոլորովին այլ կերպ պետք է դնել հարցը, յեթե դու խոսում ես գյուղական տրամադրություններով, գյուղից յեկած կառուցողների առեկտորիայի հետ. ուրիշ կերպ ես խոսում, յերբ գործ ունես ինժեներտեխնիկական կադրերի հետ կամ բանվորների արանձին շերտերի հետ:

Պետք է իմանալ առեկտորիան, վորի հետ խոսում ես: Մեզ մոտ այս ուղղությամբ լիակատար հավասարեցումն է տիրում:

Յեով դա վոչ միայն մեր ագիտատորի մեղքն է, վոր ժողով է գնում, այլ ամբողջ կազմակերպության մեջ գործը այնպես է դրված, վոր ճիշտն ասած մինչև վերջին մոմենտը չես իմանում ուր ես գնալու և ինչ առեկտորեայում ես ագիտացիա անելու: Բայց չե վոր խնդիրը նրանումն է, վոր կարողանալ մարդկանց վերցնել այնպես, ինչպես իրենք կան, գանել հենման կետը այդ կենդանի մարդկանց մատերիայի մեջ՝ մեր բուլժեվիկյան լծակի ներգործության համար: Ագիտատորը պիտի իմանա, թե ուր է գնում, ինչպիսին է իր առեկտորիան, ինչպիսի տրամադրություններ կան այնտեղ, վորն է այդ առեկտորիայի բնույթը:

Ինձ որինակ մի անգամ կանչեցին լենինյան ռայոնում Ռիկովի անվան գործարանում զեկուցելու: Յես հարց եմ տալիս—ինչ առեկտորիա յե: Մասցին, վոր բանվորների ժողով է լինելու: Նատեցի 15 բուլժեյի մեջ գրեցի վոչ այնքան մեծ թեզեր, նկատի ունենալով, վոր գործարանում բանվորների ժողով է լինելու: Գալիս եմ ժողով: Չեմ խոսում այն մասին, վոր հենց ինքը ժողով գումարելու տեխնիկան շատ ցածր մակարդակի վրա յեր գտնվում. պարտադիր «տուչ»-ի հետ միասին, վոր չգիտեմ ինչու միշտ նվազում է նվազախումբը: Ընդհանրապես շատ բան կար՝ գավառական, տնայնագործական: Շատ ժողովուրդ էր հավաքվել: Մա ինչ ժողով է, բանվորների ժողով է, թե զբոսանք կամ միտինգ: Բանից դուրս է գալիս, վոր դա վոչ թե բանվորների ժողով է, այլ այգում հրավիրված բաց միտինգ: Բայց ընկերներ, չե վոր բաց միտինգում յեղույթ ունենալը ուրիշ բան է, բանվորների ժողովում զեկուցելը ուրիշ: Ինձ վիճակված էր

տեղն ու տեղը վերակառուցվել, հարմարվել առեկտորիային: Բայց չե վոր ամեն մի ագիտատոր է վիճակի չե այդ անելու:

Վերցրեք ագիտատորի դրությունը, վորը պատրաստում է թեզիսներ, քաղվածքներ մի առեկտորիայի հետ հարմարեցրած: Գալիս է և տեսնում ուրիշ առեկտորիայի: Սկսում է իր թեզիսներով զեկուցել, իսկ բանից դուրս է գալիս, վոր առեկտորիան չի բավարարվում: Միթե կարելի յե գործը այդպես կազմակերպել: Միթե թույլատրելի յե, վոր ագիտատորը չիմանա, թե ինչ բնույթի ժողով է, վորին նրան ուղարկում են:

Մոսկվայում հարց ելին դրել այն մասին, վոր պետք է մասնագիտացնել ագիտատորներին: Մասնագիտացնել միջադպիսին հարցերում, մասնագիտացնել Մոսկվայի մանածագործների ժողովներում և արդյունաբերության մյուս ճյուղերում զեկուցումներ տալու:

Միթե կարելի յե մարդուն ունիվերսալ դարձնել, վորը մի կամ յերկու ժամ ժողովից առաջ ուղեգիր է ստանում և հեվիհեվ այս ուղեգրով վազում գալիս է. ստացվում է կատաստրոֆիկ կտրվածություն այն բանի մեջ ինչ նա յե ասում և այն պահանջների միջև, վորը առաջադրում է առեկտորիան: Յես արդեն չեմ ասում այն մասին, վոր մի քանի զեկուցողներ ուղղակի զգոն չեն: Չեկուցում է նա, ժողովուրդը ցրվում է, տեղ տեղ զրույց են անում: Տեսնում է, վոր առեկտորիան իրեն չի լսում, իսկ նա անպայման յերկրորդ բաժնից անցնում է յերրորդին, չորրորդին, հինգերորդին, ինչպես գրված է իր թեզիսներում, վոխանակ նրան, վոր հարմարվի առեկտորիայի պահանջներին: Իսկ զեկուցող—ագիտատորը պետք է ապրի առեկտորիայի հետ: Յեթե առեկտորիան նրանից կտրվում է, յեթե նա չի տիրում առեկտորիային, ապա նա ագիտատոր չե, դա ուղղակի դատարկ ժամանց է: Մեզ մոտ զեկուցողները գնում են հիմնարկություն, հանք, գործարան և չեն ճանաչում այդ հիմնարկներն ու հանքերը: Յես ձեզ կարող եմ շատ դեպքեր պատմել, վոր մեզ մոտ գործը այնքան տնայնագործական և գավառականորեն է դրված, վոր պահանջվում է շատ լուրջ շրջադարձ:

Յուրաքանչյուր առաջիտորիա իր առանձնահատկություններն ունի և յերբ դուք ազիտատորին ուղարկում եք զեկուցում անելու, ապա պետք է իմանաք, թե դա ինչ գործարան է, ինչ ժողով, նա ժողովից 2 ժամ առաջ պետք է գա գործարան, զրուցի բանվորներին հետ, խոսակցի ղեկավար ընկերների հետ, իմանա թե ինչ հարցեր կարող են տալ բանվորները:

Մեզ մոտ այս գործը պետք է զննել այնպես, վոր ամեն մի գործարան ունենա իր «անցագիրը»:

Ասանք վորևե հանք՝ Լինինյան ուսումնամ, սրա մասին պետք է գրվի նրա կարճ պատմությունը. հանքը կազմակերպվել է այս ինչ ժամանակ, այսինչ թվին, կապիտալիզմի պայմաններում տեղի յե ունեցել այս ինչ բանը, խորհրդային ժամանակաշրջանում ինչպես է վերակառուցվել այդ հանքը. այդպիսի տարրական ավյալները զեկուցողը պետք է վերցնի և նայի յերբ զնում է հանքը զեկուցում տալու:

Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր հիմնարկ, անպայման պետք է ունենա գոնե այդպիսի կարճ տեղեկանք, վորպեսզի զեկուցողը իմանա, թե ինչ առաջիտորիայի հետ ինքը գործ ունի, ինչ գործարան, կամ հանք է յեղել այդ անցյալում. դա պետք է լինի այնպիսի «անցագրային» գրքույկ, վորտեղ հետևողականորեն գրանցվի այդ ձեռնարկում տեղի ունեցած բոլոր կարևորագույն զեպքերը, վորպեսզի այդ տեղեկությունները թարմ լինեն զեկուցողի, ազիտատորի համար:

Ընկերներ, (յեթե դուք կարդացել եք ընկ. Կագանովիչի ճառը Մոսկվայի կոմիտեյի սլենումում) Մոսկվայի կազմակերպությունը իրեն խնդրի է դրել այդպիսի «անցագրեր» կազմակերպել կոլխոզներում:

Ընկերներ, միթե մենք չենք կարող այդ բանը անել մեր հիմնարկներում:

Անպայման այդ պետք է անել:

Ազիտացիայի մեթոդիկան, ազիտատորների դաստիարակությունը, նրանց հետ աշխատելը հսկայական նշանակություն ունի:—Ինքը զնում եք բանվորների մոտ զեկուցե-

լու, նրանց բացատրել միջազգային դրուժյունը. մի հարց վորը միշտ հետաքրքրում է բանվորներին:

Ինչպես պետք է մոտենալ այդ հարցին:

Յեա, որինակ գիտեմ մի զեկուցողի—ազիտատորի, վորը իր գրպանում ունի ստանդարտ թեզիսներ միջազգային հարցերի շուրջը, վորոնք գրված են ավելի քան կես տարի սրանից առաջ: Այդ թեզիսները նրա գրպանում են. և յեթե վաղը նրան ուղարկեն միջազգային դրուժյան մասին զեկուցելու, նա կվերցնի այդ թեզիսները կավեացնի նրան նաև այսօրվա զեպքերը: Զեկուցումը կսկսվի այսպես, «Կոմիտեյների գործկոմի այս ինչ սլենումը այսպիսի վորոշում է կայացրել, կուսակցության 16-րդ համագումարում միջազգային դրուժյան մասին այս ինչ բանն է ասված, ապա կասի այն մասին, վոր գոյություն ունի միջազգային կրիզիս, բուրժուազիան զինվում է:

Թվերը նրա մոտ պատրաստ են:

Յեվ հենց վոր նա կսկսի իր ստանդարտ թեզիսներով խոսել բանվորներին վերջ ի վերջո մնում է մի բան հասկանալ, վոր գոյություն ունի բուրժուազիա, վոր կա կրիզիս. բայց այդ մասին իրենք բանվորները գիտեն, վոր այնտեղ կրիզիս է, վոր այնտեղ փթման պրոցեսս տեղի ունի: Մինչդեռ միջազգային դրուժյան հարցերը բանվորին անհրաժեշտ է բացատրել այլ կերպ. բացատրել այնպես, վոր հասկանալի լինի նրա համար: Մհա դու արի ու բանվորին աստ. «վերջին 10-20 օրվա ընթացքում դու թերթերում կարդացել ես հետևյալ բաները...» և սկսում ես բանվորի հիշողության մեջ վերականգնել այն, ինչ նա կարդացել է վերջին օրերս «Պրավդա», «Բադ-Րաբոչի», «Վիշկա» կամ այլ թերթերում:

Նրա հիշողության մեջ վերականգնել հարցերը, վորոնք նա ընդհատումներով կարդացել է թերթերում, բայց ի վիճակի չի յեղել ընդհանրացումներ կատարել: Յեվ անցնել կրիզիսին վերաբերող հարցերին, վոր թե յեխնելով ընդհանուր դատողություններից, այլ կոնկրետ հարցերից, վորոնց բանվորը պատահում է ամեն օր թերթերում: Կարողացեք ընդհանրացնել և բացատրել թե ինչպես այս փաստերը

այնպես ինչպես հայելին անդրադարձնում և հաստատում
այն, ինչ ընկ։ Ստալինն և ասել կուսակցութեան 16 ըդ հա-
մագումարում, այն ինչ վոր գրված է կոմիստերնի վորո-
շումներում։ Յե՛վ անա այդ ժամանակ բանվորը հեռանալով
էր հիշողութեան մեջ կվերականգնի այն ինչ կարգացել է
թերթերում և այն ինչ դուք նրան հնարավորութուն տվե-
ցիք ընդհանրացնել, այն ինչ չունեք բանվորը։

Փորձեցեք միջազգային հարցի մասին զեկուցել, այն-
պես, ինչպես այդ անում և ստանդարտ թեղիսներ ունեցող
ընկերը, փորձեցեք բացատրել բանվորին այնպես, ինչպես
յես եմ ձեզ ասում և դուք կհամողվեք, վոր աուղիտորիան
յերկրորդ դեպքում կցրվի ավելի բավարարութուն ստա-
ցած, քան առաջին ստանդարտ զեկուցումից։ Դա անվի-
ճելի յէ։

Ազիտացիայի մեթոդիկայի ձեռ կապված մի ամբողջ
շարք հարցեր կան այն մասին, թե ինչպես ազիտացիա ա-
նել բանվորներին տարբեր շերտերի մեջ ասենք Ամիրաջա-
նի հորափորներին մեջ, նալթաթոր գործարանում, Լենինի
անվան մանածային ֆարրիկայում և այլն։ Յես չեմ կարող
այսոր մանրամասն դրա վրա կանգ առնել։ Յուրաքանչյուր
ձեռնարկ ունի էր առանձնահատկութունները և բոլոր դեպ
քերումն էլ այստեղ մասսայական-բացատրական աշխա-
տանքների մեջ ստանդարտ մոտեցում չի կարող լինել։
Պետք է ճանաչել Ամիրաջանի հորափորներին, վորպեսզի
կարողանալ նրանց համար համապատասխան զեկուցում
տալ։

Յես յեղել եմ Բագվում շատ ձեռնարկներում։ Մի ձեռ-
նարկում կոմյերիտուէին, աշխատում և ստանդիկ վրա։ Նրա
հետ խոսում ես մի շարք արտադրական հարցերի շուրջը-
վատ չի պատասխանում։ Հարցնում ես, ինչպես է զրված
բացատրական աշխատանքները։ Պատասխանում է,—վոչինչ
բացատրում են։—Իսկ կարող եք ասել լինչ է կատարվում
ներկայումս Գերմանիայում։ Պատասխանում է—«ժամանակ
չունիմ» և փախչում։ Մա տեղի յէ ունեցել «Մոստինի»
գործարանում։ Ակտիվ կոմյերիտուէին, վորը արտադրական
հարցերին վատ չի պատասխանում, բոլորովին չի դիր-
քորոշվում միջազգային հարցերի նկատմամբ։

Մի ուրիշ գործարանում հարցնում ես.—ինչպես է ձեզ
մոտ գործը զրված։ Բացատրում են ձեզ թե վոչ։—Այո բա-
ցատրում են.—ինչ փոխհարաբերութեան մեջ են Յապոնիան
և Չինաստանը, պատասխանը լինում է—չգիտեմ Յապոնիան
թե Չինաստանը, նրանցից, վոր մեկն է խփում։ Իսկ Գեր-
մանիայում ինչ է կատարվում գիտեմ։—Չգիտեմ։ Ո՞վ է
չիտելը։ Չգիտեմ։—Քանի տարի յէ աշխատում ես գործա-
րանում։—5 տարի։—Թերթեր կարդում ես։—Չեմ կարդում։

Բանվորը, վոր 5 տարի յէ աշխատել է գործարանում
թերթ չի կարդում։

— Իսկ ժողովներում լինում ես։—Այո, իհարկե պարտա-
ճանաչ կերպով, լինում եմ բոլոր ժողովներում։—Իսկ ի՞նչ
ես հասկանում։ Լուր ե. ինչպես յերևում է թույլ և յու-
բացնում։

Յերբեմն զեկուցողը, ազիտատորը զեկուցում է և մտա-
ծում է՝ այն ինչ վոր ինքը ասում է ուրիշները անպայման
կհասկանան։ Դա ճիշտ չի։ Ազիտատորը պետք է ինքնաշ-
խատութեամբ զբաղվի։ Մենք նույնպես նրանց պետք է
ողնենք։

Պրակտիկան ցույց է տալիս, վոր բանվորական աուղի-
տորիայում ինչքան կարճ զեկուցես, այնքան հասկանալի
յէ բանվորների համար։ Պետք է կարողանալ բացատրել
առանց ցրվելու։ Դալիս է ազիտատորը և ամեն ինչի մասին
նա պետք է խոսի, նա պետք է ասի— և այդպես էլ զրված
է նրա մոտ, վորպեսզի վոչինչ չմոռանա։ Դուրս է գալիս,
վոր ամեն ինչի մասին խոսում է, իսկ նրա զեկուցումը
կենտրոն չունի, իսկ բանվորները վատ են յուրացնում
զեկուցումը։

Վոչ մի անգամ մի յենթարկվիլի սեփական թեղիսներիդ
իշխանութեանը, այլ կորոզացիլ հաշվի առնել աուղիտո-
րիայի տրամադրութունները և այն, թե ինչպես է նա
դիրքորոշվում քո զեկուցման նկատմամբ։ Լավ ազիտատո-
տորը աուղիտորիայի հետ զրուցում է խնդրի ելութեան
մասին։ Նա տիրում է աուղիտորիային, աուղիտորիան խո-
սում է իր հետ։

Ինձ պատմել են, թե ինչպես մի քանի ազիտատորներ—
զեկուցողներ զեկուցումներ են անում համատարած քաղա-
քական ճոճոցոցով, իսկ հաճախ ուղղակի ճոճոց է, վորը
ինհարկե բանվորին չի բավարարում: Լավ ե, վոր մեզ մոտ
բանվորները շատ թե քիչ քաղաքավարի յեն: Մոսկվայում
յեղել են բանվորական ժողովների վորոշումներ՝ խնդրել
Մոսկվայի կոմիտեյին այլևս այդպիսի զեկուցող չուղարկի
մեզ մոտ, վորովհետև նա դատարկահնչյուն է և վոչ թե զե-
կուցող (ծիծաղ):

Յերբեմն զեկուցողը գնում է բանվորական ժողովի և չի
յել մտածում, վոր պետք է պատրաստվել: Մի կերպ դուրս
կգամ տակից: Այդ վատ է, ընկերներ: Յեթե դու գնում ես
բանվորական ժողովի և չես կարող պատասխանել այն հար-
ցերին, վորոնք ծագում են բանվորների մեջ, լավ է մի
գնա ժողովի: Բանվորը հարց է տալիս, իսկ զեկուցողը
ասում է—դա իմ զեկուցման վերաբերող հարց չի: Դա տե-
ղի յե ունենում, վորովհետև բոտ էյուլթյան նա չի կարող
այդ հարցին պատասխանել: Պրոբլեմը հանդում է նրան,
վոր ամբողջ ազիտացիոն—մասսայական աշխատանքը վե-
րելից ներքև պետք է բարձրացնել, մեծ քաղաքական ու
կազմակերպչական մակարդակի դնել, վորպեսզի մենք ավե-
լի լավ տիրենք այնպիսի զենքին, վորպիսին մեր ձեռքում
հանդիսանում է ազիտացիան: Յես դեռ չեմ խոսում այն
մասին վոր խոսքի ազիտացիան որգանապես չի ներդաշ-
նակվում կինոյի, պլակատների լոգունդներին միջոցով տար-
վող ազիտացիայի հետ:

Մենք վատ ենք տիրում ազիտացիայի այնպիսի հզոր
զենքին, ինչպիսին, ոսպիոն է. Յես կարող եմ ձեզ հազոր-
դել, թե ինչպես է գերմանական կոմկուսակցությունը զրել
քաղաքական ազիտացիան Բերլինում:

Դա յեղել է մինչև Հիտլերյան արշավանքը, յերբ մեր
գերմանական կուսակցությունը լիզալ գրության մեջ եր
գտնվում, յերբ նա «Սպորտ պալատ»-ում կարողանում եր
հավաքել կոմունիստների, բանվորների 20 հազարանոց մի-
տինգ: Ինհարկե գերմանական կոմկուսը ազիտացիան հար-
մարեցնում է իր բանվորների պահանջներին, նրանց պա-

հանջներին, և ազիտացիան այնտեղ վատ չեր դրված: Ահա
այդ 20 հազարանոց ժողովում «Սպորտ-պալատ»-ում վորը
նվիրված եր կարծեմ աշխատավոր կանանց Բերլինի կոն-
ֆերանսին, կարելի յեր դիտել, թե ինչպես է դրված ազի-
տացիան գերմանական կուսակցության մեջ: Այնտեղ կու-
սակցութունը պայքարում է իշխանության համար, պրոլե-
տարական դիկտատուրայի համար և ազիտացիան այդ գոր-
ծին է ծառայում:

Դուք նստած լսում եք հեետորի յելույթը, միևնույն
ժամանակ կինոն ձեզ ցուցադրում է ազիտացիոն լոգունդ-
ներ, որինսակ, «բուլմիստը վելսի ճաշը որական արժե
այսքան մարկա, իսկ բանվորների աշխատավարձը իջեցրել
են այսքան մարկայով»: Մտացվում է խոսքի ազիտացիայի
և կինոյի ներդաշնակություն: Խոսքը վերաբերում է նրան,
վոր կանանց ներգրավել հեղափոխության շրջագծի մեջ:
Հեետորը ճառ է ամում, իսկ կինոն ցույց է տալիս ծաղրա-
շարժ նվիրված պապին հետևյալ մակագրությամբ: «Նա քեզ
յերկնային թագավորություն է խոստանում իսկ յերկրում
նա բուրժուազիայի հետ միասին քեզ կեղեքում է»:

Հեետորը խոսելը վերջացրեց, նվագում է յերաժշտա-
խումբը՝ բոլորը յերգում են Բերլինի բանվորների սիրած
յերգը, «մենք պաշտպանում ենք Խորհրդային Միությունը»:
Ապա ճայն է ստանում մի ուրիշ հեետոր, յելույթ է ունե-
նում բանաստեղծը, վորին վոստիկանական ազենտը հնա-
բավորություն չտվեց կարգալ բանաստեղծությունը:

Այնտեղ ժողովներին միշտ մասնակցել է վոստիկանական
ազենտը, վորը ուզած ժամանակ կարող է փակել ժողովը:
Ահա ազիտացիայի առանձնահատկությունը, վորը յուրա-
հատուկ կերպով հարմարեցված է բանվորների պայման-
ներին:

Ինչու մենք, յեթե վոչ գործնական, ապա մեր մասսա-
յական ժողովներում պետք է պահպանենք շարունը, կըրկ-
նությունը, ինչու մեզ մոտ չմտցնել այն, ինչ ազիտացիայի
ասպարիզում անում է Մոսկվայի կուլտուրայի և հանգստի
պարկը: Նա աշխատում է ազիտացիայի նոր ձևեր ու մե-
թոդներ ստեղծել, այլիլի շատ դիմամիկա ու շարժում, յե-
րաժշտությունը ներդաշնակված խոսքի հետ և այլն:

Մեզ մոտ այդ չկա: Մեզ մոտ անասելի շարուն, անասելի գավառականութուն կա աշխատանքի մեջ, իսկ մասսայական—բացատրական աշխատանքը շարունը չի սիրում:

Յես այլևս չեմ ասում, վոր մեզ մոտ բյուրոկրատորեն են մոտենում լողունգներին:

Առաջին. մեզ մոտ լողունգները անարգել կերպով կը պրցնում են բոլոր տներին, ցանկապատերին, այլանդակում են քաղաքը, ցույց տալով մեր ընդհանուր անկուրտության աստիճանը: Դուք գալիս եք Ստալինյան հանրը. և կանանք լողունգ, «բոլորդ դեպի խորհուրդների վերընտրությունը»: Այդ վերընտրությունները վաղուց անցել են, իսկ լողունգ «դեպի գործ» ինչի մասին ե այդ ասում: Դա ազիտացիայի վերաբերմամբ բյուրոկրատական վերաբերմունք ցույց տալ է հանդիսանում: Դուք կարող եք գալ բանվորական ակումբ և կտանք լողունգ, բանվորականների պատգամավորական ժողովների վերընտրություն մասին, յերբ այդ հարցի ակտուալությունը վաղուց անցել է, բայց չեք պատահի լողունգի, վորը ակտուալ է այսօր:

Մեր խնդիրը կայանում է նրանում, վոր մեր ձեռնարկներում է՝ ակումբներում է՝ մեծ մասսայական ժողովների վայրերում լավ դնելինք գյուղատարաբական ազիտացիայի գործը:

Ոոչոր խնդիր է ազիտացիայով ընդգրկել բոլոր բանվորներին: Յեթե դուք հաշվելու լինեք, թե գործարանում ազիտացիոն աշխատանքով ինչքան բանվորներ եք ընդգրկում, ապա կստացվի վոչ ավել քան 50—60%, յերբեմն ավելի պակաս, իսկ դա քիչ է, բանվորների խոշոր քանակություն կա, վորը չի ընկնում մեր մասսայական ազիտացիոն աշխատանքի շրջագծում: Այստեղ ոգնություն է հասնում անհատական ազիտացիան, հիմնարկներում բանվորական ավաններում և այլն խմբակային ազիտացիան:

Խնդիրը նրանումն է, վորպեսզի զլխովեն ընդգրկել բանվորներին, իսկ մեզ մոտ այդ մասին հող չեն տանում: Մեզ մոտ հիմնարկներում յերբեմն մտածում են, վոր ազիտատորին կարելի յե ընտրել: Յես յերբեմն կարգացել եմ արձանագրություններում—այս ինչ ընկերջը ազիտատոր ընտրել: Չեղավ. ինչպես կարելի յե ազիտատոր ընտրել:

Միթե մենք կարող ենք ստիպել վորեն մեկին ազիտատոր դառնալ, յեթե նա դրա համար տվյալներ չունի: Մեզ մոտ ձեռնարկներում այնպես ինչպես առաջ են քաշում կոմյունիստիկության կցվածներ կամ առաջ են քաշում, ինչ վոր ինֆորմատոր, առաջ են քաշում և ազիտատորի: Սա բյուրոկրատական մտեցում է: Ազիտատորը պետք է տվյալներ ունենա, իսկ ձեռնարկներում էլ չեն յալ ազիտատորներ:

Դուք գիտեք, վոր բանվորները հաճախ լսում են նրանց ովքեր խոսում են իրենց հետ նրանց հասկանալի լեզվով: Դուք ազիտատորներին այդ կարգին իրական մոտենդ տվեք, իրեպես զինեք, այն ժամանակ կհամոզվեք, թե ինչքան ողտակար աշխատանք են կատարում մեր պրոլետար—ազիտատորները: Իսկ ինչպեսի դրություն գոյություն ունի մեզ մոտ ձեռնարկներում ազիտատորների նկատմամբ. կամ ընտրում են մարդու, վորը ընդհանրապես դրանով չի զբաղվում, կամ չի ձանաչում իր ազիտատորներին: «Բագ. Լարոչի» գործարանում կան ազիտատորներ, բայց վոչ վոք նրանց մասին զարգացար չունի, մինչև իսկ բջջի քարտուղարը Ազիտատորը գոյություն ունի ինքն իրեն, ազիտացիա յե տնում, վոչ վոք նրան չի ոգնում: Հարցնում ես—հվ է մեզ մոտ ազիտատորը: Չեն իմանում, ըստ յերևույթին ազիտատորը պետք է լինի առաջնակարգ հարվածային. իսկ ահա մի տեղ մենք գտանք այնպիսի ազիտատորի—կոմունիստի, վորը 6 ամիս չեք վճարել անդամավճարը և ասում եր վոր չեմ վճարելու, չեմ ուղում (ծիծաղ): Յեվ դա կոչվում է ազիտատոր և հաշվվում է ազիտատորների ցուցակում:

Մի քանի վայրերում ազիտակուլիտիվները լսում են Պաշը—Ավիաքիմի, Մոսկովի գեկուցումները: Միթե դա ազիտակուլիտիվների գործն է:

Ինչ ասել է ազիտակուլիտիվ: Դա ազիտատորներին ոպերատիվ խմբակ է, վորին անհրաժեշտ է իր ժամանակին պատմել կենսական հարցերի մասին, սովորեցնել ինչպես բացատրել բանվորին, ինչ բացատրել, ինչ մեթոդ կիրառել այդ հզոր ուժը գործարանում և հանքերում կազմակերպելու համար:

Բայց ազիտակոլլեկտիվը մեզ մոտ վերածվում է կամ զե-
կուցուցներ լսող կազմակերպության կամ վորպես քաղաքա-
գիտություն զարուց: Յեն չեմ հիշում, մի ինչ վոր գործարա-
նում մարդիկ վատ չեյին աշխատում, բայց անոգնական եյին,
թողնված եյին իրենք իրենց, վոչ վոր չեյ ոգնում: Այդպիսի
աշխատակիցներին պետք է գնահատել, նրանց հետ պետք է
աշխատել, նրանց տալ գրականություն կուսակցություն
Բազմի կոմիտեյից: Պետք է հասնել նրան, վոր ազիտակոլ-
լեկտիվները լինեն մարտական ուղերատիվ խմբակներ, վո-
րոնք միշտ պատրաստ են պատասխանելու յուրաքանչյուր
հարցի, վորը հետաքրքրում է բանվորին:

«Պյատակով»-ի անվան գործարանի բջի քարտուղարին
հարցնում ես—քեզ մոտ ով է ազիտատորը: Ասում է ազգ-
անունը: Գնում են փնտոելու: Բանից դուրս է գալիս, վոր
այդպիսի ազիտատոր չկա (ծիծաղ): Հարցնում ես. ով է
քեզ մոտ ազիտատորը: Ասում է ազգանունը: Լմվ ազիտա-
տոր ե:—Սյո, նա հիանալի ազիտատոր ե: Մոտենում ես
այս «հիանալի» ազիտատորին և հարցնում ես—ընկեր դուք
եք ազիտատորը: Պատասխան ես ստանում՝ «ինձ մի ան-
գամ ասել են, վոր յես պետք է լինեմ ազիտատոր, բայց
ընդհանրապես այդ գործով չեմ զբաղվում» (ծիծաղ): Բայց
չե վոր նա ազիտատոր է հաշվվում է այն ել լավ ազիտատոր:

Գործը նրանումն է, վոր չեն հասկանում, թերագնահա-
տում են մեզ մոտ յեղած այս հսկայական ուժը: Իսկ մեր
առաջ կանգնած խնդիրները մեծ են: Յեթե դուք հարց դնել
լու լինեք նավթի համար մղվող պայքարի մասին. և ինչ-
պես ազիտացիան հարմարեցնել այդ խնդիրներին, ապա
հետ մնալը այստեղ ակներև ե: Անց է կացվում լավագույն
հորափոր վարպետի մրցում: Ազիտացիան վատ է արձա-
գանքում այս միջոցառմանը, այն լողունգները, վոր մենք
բաց ենք թողնում նավթագործ մասնաների մեջ թույլ
են արձագանքվում: Իսկ մեր առաջ խնդիր ե դրված վոչ
միայն կատարել 14,400 հազար տոնն նավթի պլանը: Մեր
առաջ խնդիր ե դրված 2-րդ կիսամյակում նավթային պլա-
նով տալ մեկ միլիոն տոնն լրացուցիչ նավթ և նախապատ-
րաստվել այն բանին, վոր 1934 թվին տանք վոչ քն 14,400

հազար տոնն այլ 20 միլիոն տոնն նավթ: Տեսնում եք ինչ-
պիսի հսկայական խնդիր ե դնում մեր առաջ կուսակցու-
թյունը և խորհրդային յերկիրը՝ յելնելով գոյություն ու-
նեցող վառելիքային սեսուերաներից, յելնելով այն նյութա-
կան հնարավորություններից, վոր մենք ունենք Բազմում:
Բայց չե վոր այս խնդիրը ստիպում է մեզ թեվերը քշտել
և գործի անցնել, յուրացնել նոր հանքերը, սկսել պլանով
նախատեսանված լրացուցիչ հորավորումը:

Աշխատանքների այս հսկայական պլանը, Բազմի կազ-
մակերպությունից, Բազմի պրոլետարիատից պահանջում է
կամքի ու եներգիայի յուրը յարում, վորովհետև այդ բոլո-
րի յրազործումը միայն մեղանից է կախված: Համաձայն
այս խնդիրների, ազիտացիան հսկայական անելիք ունի
այս գործում: Մինչև այժմ մեզ մոտ այս հարցում զգալի
հետամնացություն գոյություն ունի, իսկ մեր առաջ դր-
ված խնդիրները հսկայական, մեծ, պետական մասշտաբի
խնդիրներ են: Անա թե ինչու մենք անհրաժեշտ համարե-
ցինք հարցը դնել յր ամբողջ սրությամբ, վորպեսզի ազի-
տացիայի ասպարեզը, մասսայական աշխատանքի ասպարե-
զը, վորը անքակտելիորեն կապված է ազիտացիայի հետ,
դնել այնպիսի բարձրության վրա, վորը արժանի լինի
Բազմի պրոլետարիատին, վորպեսզի դա արժանի լինի այն-
պիսի առաջավոր պրոլետարական կազմակերպությունը,
ինչպիսին հանդիսանում է Բազմի կազմակերպությունը:
Մենք պետք է և կարող ենք աշխատանքի որինակներ ցույց
տալ Անդրկովկասյան կուսակցական բոլոր կազմակերպու-
թյուններին: Մեզ մոտ բոլոր հնարավորությունները կան:
Մեզ մոտ է հիանալի միջակ պրոլետարը: Մնում է միայն
լավ կազմակերպել գործը, մնում է միայն վոչ թե անայնա-
գործորեն, այլ յուրիկորին և կոնկրետ կերպով ձեռք յսիել
մասսայական ազիտացիայի բոլոր հարցերի յուժմանը և
մենք ձեզ հետ միասին վոչ միայն մոտակա կես տարում,
այլ մոտիկ ամիսներում կհամենք զբաղտն արդյունքների:

Վերցրեք քաղորդ ձեռնարկներում: Անհրաժեշտ է ամիսը
մեկ անգամ անպայման կազմակերպել քաղորդ նայեցեք թե
ինչպես բանվորը լավ է զիրքորոշվում այս քաղորդա հան-

դեպ, քաղորդ անկասկած նրան բավարարում ե: Այդ գործը ճշտապահութեամբ և սխտեմատիկորեն պետք է անցկացնել, լավ նախապատրաստել, լավ կազմակերպել:

Յես համոզված եմ, վոր յեթե Բագվի կոմիտեն և կուսակցութեան ռայկոմները, յեթե կուսակցական ապարատը կարողանան հենվել զոնե այն կոլեկտիվի վրա, վորը այս տեղ ներկա յե, կկարողանան քաղաքական ազիտացիայի գործը դնել այն մակարդակի վրա, վորին հասել է Մոսկվայի կազմակերպութեանը: Մենք ձեզ հետ միասին նավթի պլանի կատարման համար մղվող պայքարում, տնտեսական և քաղաքական կամպանիաներում, Համկոմկուսի (ք) կենտկոմի և Անդրյերկրկոմի վորոշումների կիրառման համար մղվող պայքարում, մենք ձեզ հետ միասին կհամենք հաջողութեաններին:

Այսոր մենք ձեզ կանչել ենք, վորպեսզի ազիտացիոն մասսայական աշխատանքի լավագույն կազմակերպվածութեան, բոլշևիկյան կազմակերպվածութեանը նախաձեռնենք: Տեղերում աշխատող ձեզանից ամեն մեկի մեջ քիչ հարցեր չեն ծագում: Դուք այդ հարցերը պետք է դնեք, պետք է ձգտեք նրանց լուծելու:

Յես չեմ կասկածում, վոր Բագվի կազմակերպութեանը չկարողանա մոտ ժամանակներում, որինակելի կերպով դնել աշխատանքի այդ կարեվորագույն տեղամասը, մարտական, ուղերատիվ, քաղաքական, մասսայական ազիտացիայի տեղամասը: (յերկարատե ծավահարութեաններ):

ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՈՒՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊԵՐԻ

Ազիտացիայի պրոբլեմը—դա քաղաքական մեծ խնդիր է: Քաղաքական ազիտացիան՝ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի ամբողջ պատմութեան ընթացքում՝ միշտ ել այժմեական հարց է յեղել: Յեվ այդ պայքարի ամեն մի շրջանում ել մեր կուսակցութունը կոնկրետ կերպով է դրել ազիտացիայի հարցը, միշտ ունակ կերպով տերապետել է այդ զենքին կուսակցական լոզունգների իրականացման, մասսաների կազմակերպման համար մղվող պայքարում:

Լենինը դեռ բանվորական շարժման արշավույթին կոնկրետ կերպով դրել է ազիտացիայի խնդիրը: Եկոնոմիստների դեմ մղվող պայքարում է՝ Լենինը և՛ Պլեխանովը պակաս հաղթանակ չեն տարել, և պայքարել քաղաքական ազիտացիայի, պրոլետարական մասսայի մեջ սոցիալիստական գաղափարական ու քաղաքական ինքնազիտակցութունը արմատացնելու համար:

Լենինը «մեր շարժման կենսական խնդիրները» (1900 թ) գրվածքում ասել է.

«Մեր գլխավոր և հիմնական խնդիրն է ոժանդակել բանվոր դասակարգի զարգացմանն ու քաղաքական կազմակերպութեանը: Ով վոր այդ խնդրին յերկրորդական տեղ է տալիս, ով պայքարի բոլոր առանձին պրիոմներն ու մասնավոր խնդիրները չի յենթարկում նրան, նա կանգնած է կեղծ ճանապարհի վրա և լուրջ վնաս է հասցնում շարժմանը»:

Դրանից առաջ, «Ռուս սոց-դեմոկրատների խնդիրները» գրվածքում Լենինը ազիտացիային առաջնակարգ տեղ է տվել:

«Պրոպագանդայի հետ անքակտելի կապակցութեամբ, գրել է Լենինը, — գրված բանվորների մեջ տարվելիք ազիտա-

ցիան, վորը բնականաբար առաջին տեղն է գրավում ուսաստանի ժամանակակից քաղաքական պայմաններում և բանվորական մասսաների զարգացման մակարդակի այս շրջանում»:

Հետագայում Լենինն առաջարկել է որգանապես կապել ագիտացիայի խնդիրները՝ բանվորների կոնկրետ կյանքի հետ: Ագիտացիայի խնդիրները նա այսպես է ձևակերպել:

«Ագիտացիան բանվորների շարքերում կայանում է նրանում, վոր սոց. դեմոկրատները մասնակցում են բանվոր դասակարգի բոլոր տարերայնորեն առաջացած պայքարին, բանվորների և կապիտալիստների միջև բանվորական որվա—աշխատանքի վճարի, աշխատանքի պայմանների և այլնի համար ամեն տեսակ ընդհարումներին: Մեր խնդիրն է, վոր մեր գործողները միացնենք բանվորական կյանքի գործնական—կենցաղային հարցերի հետ... զարգացնենք բանվորների մեջ իրանց իսկ համերաշխութան գիտակցությունը, ամբողջ ուսական բանվորների ընդհանուր գործի և ընդհանուր շահերի գիտակցությունը, վորպես միասնական՝ բանվոր դասակարգ, վորը կազմում է պրոլետարիատի համաշխարհային բանակի մի մասը»:

Դենլով բանվորների մեջ ագիտացիա տանելու խնդիրները մտտակա տնտեսական պահանջների հիման վրա, Լենինը առանձնապես ընդգծել է ագիտացիայի նշանակությունը մասսաներին քաղաքական պայքարի համար կազմակերպելու գործում:

«Յեթե տնտեսական բնագավառում—գրում է Լենինը—չկա բանվորական կյանքին վերաբերող այնպիսի հարց վոր տնտեսական ագիտացիայի մեջ ոգտագործելու յենթակա չլինի, ապա ճիշտ նույն ձևով ել չի կարող լինել քաղաքական բնագավառում տյնպիսի հարց, վորն զբաղմունքի առարկա չլինի քաղաքական ագիտացիայի համար: Այդ յերկու տեսակի ագիտացիաները, վորպես մետալի յերկու յերեմները սերտ և անբաժան կերպով կապված են իրար հետ սոցիալ դեմոկրատիայի գործունեությունից մեջ»:

Քաղաքական ագիտացիայի համար մղվող պայքարը յեղել է պայքար, իսկական մարքսիզմի բոլշևիզմի համար: Բանվոր դասակարգի պայքարի նոր ետապները՝ կապված հեղափոխական կոնկրետ խնդիրների հետ, նոր ձևով են դրել ագիտացիայի վերաբերյալ հարցերը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կուսակցություն և բանվոր դասակարգի առաջ նոր խնդիրներ դրվեցին: Այդ իսկ պատճառով ագիտացիայի խնդիրը պետք էր լուծել նոր ձևով: Փոխվեցին պայմանները, սակայն ագիտացիայի հաղափական նեանակութունը բոլորովին չբուլացավ:

Ագիտացիան յեվ այսու—հանդիսանում է այժմեական, ակտուալ հարց: Յերբ մենք սոցիալիստական հասարակություն կառուցելիս անխնա պայքար ենք մղում բուրժուաիզմի դեմ, նենց այդ պայքարի յեսանկյան յակ էլ պիտի լինի ագիտացիան: Վճռական պայքար, պիտի մղել ինչպես ագիտացիայի դերի բյուրոկրատական և ոպորտունիստական թերազնահատման դեմ, նույնպես և բյուրոկրատական աղավաղումների դեմ, վորոնք տեղի յհն ունենում մեր ագիտացիոն աշխատանքի պրակտիկայում:

Ինչու՞ն է կայանում այդ բյուրոկրատիզմը: Նրանում, վոր ագիտացիոն աշխատանքը զրկվում է կենդանի վոզուց և հաճախ զրկվում սխեմատիկ կանոնադրությունների շրջանակում, ուրեմն և կտրվում կոնկրետ կյանքից: Մենք ագիտացիա յենք մղում միլիոնների շարքերում:

Իս կենդանի մարդկային մատերիալն է, վորին անհրաժեշտ է վերադաստիարակել սոցիալիստական սկզբունքների հիմունքով, վորին մասնակից պետք է դարձնել սոցիալիստական հսկա շինարարությունը:

Մենք հաճախ հարցերը լուծում ենք մեխանիստորեն, կոնկրետ իրականությունից կտրված և կաբինետային կերպով, յերբ վճռում ենք խմբակային ագիտացիայի, դվարճացման, ագիտացիայի մեթոդիկայի, կուլտուրայի և հանգստի պարկի վերաբերող հարցերը: Ուտոպիստ Ֆուրյեն իր ապագայի կոմունաների կառուցումը հնարավոր էր համարում, հիմնը վելով կրքերի և բնագլխների համադրություն, ճիշտ և խելացի ոգտազորման վրա: Անկասկած խոր մլ տք է դա:

Հաճախ մեր պրակտիկան, թեկուզ հենց ժամանցի, զվարճության հարցերում, հաշվի չի առնում, վոր բանվորական պետությունը հոգեվոր միաբանությունն է, վանք է: Որինակ, հարց են տալիս. ինչո՞ւ կուլտուրայի և հանգստի պարկում կոլլեկտիվ պարեր են սովորեցնում: Ինչո՞ւ թույլ են տրվում այդ նույն պարկում, վոր յերիտասարդները գարմոշկայով և յերգեչով զրոսնեն: Այդպիսի «ինչո՞ւ»—ներշատ են տրվում և դա վոչ միայն կուլտուրայի պարկի վերաբերմամբ: Մենք հեռու ենք այն մտքից վոր մեր կուլտուրայի և հանգստի պարկն արդեն ժամանցի, զվարճության հարցը լուծել է: Այդ տեսակետից նա կարիք ունի վոչ միայն խիստ քննադատություն, այլ և ոգևորյալ:

Այնտեղ շատ բան այնպես է կազմակերպված, ավելի ճիշտ կազմակերպված է և իհարկե, վոչ միայն կուլտուրայի պարկում, այլ և բանվորական աղումքներում, կլիններում և այլն, վոր հանգստի փոխարեն, տրամագծորեն հակառակ արդյունք է ստացվում: Միաքը կայանում է նրանում, վոր այդ բոլոր «ինչո՞ւ»—ները լրիվ կերպով հաշվի չեն առնում մի հանդամանք, դա այն է, վոր մենք մարդկանց պիտի վերցնենք այնպես, ինչպես վոր նրանք կան և այդ մարդկային մասերիսի մեջ պիտի փնտնենք հեռուստի կեսը, մեր բալոյեկիյան հեղափոխական պեսակյան լծակի հաւաք: Հենց դրա մեջ է կայանում ազիտացիոն և մասսայական աշխատանքի արվեստը: Արվեստը կայանում է նրանում, վոր զվարճություններն ու ժամանցներն ել դառնան կոլլեկտիվ դաստիրակության միջոց, գործիք, սակայն առանց ձանրացուցիչ ուղղություն բռնելու դեպի ճշմարտության ճանապարհը: Այդ կապակցությունը անողտավետ չէր լինի հիշել այն մասին, թե Լենինն ինչպես է դրել գյուղացիներին կոլտնտեսությունները զբաղելու հարցը:

Դժբախտությունը կայանում է նրանում, վոր մեզ մոտ բոլշևիկյան ազիտացիան, բոլշևիկյան ազդեցությունը մասսաների վրա՝ փոխարինվում է սխեմայով, կանոնադրություններով, մտածողություն և պրակտիկայի պահպանողականությամբ, առանձին փոքրիկ պակասությունների որինակով՝ ամբողջ շղթան բռնելու անընդունակությամբ, վորը հնարավորություն կտար դնելու ավելի մեծ հարցեր:

Յերբեմն փոքրիկ փաստերի համար դեռ ու դեռ ենք ընկնում ու ջուր ծեծում և նրանց համար անպայման կանոնադրություն գրում (ինչպես կարելի չի առանց կանոնադրություն): Այն ինչ՝ ազիտացիոն մասսայական աշխատանքի բնագավառում պահանջվում է մասսաների ամենալայն նախաձեռնություն, նոր ծիլերի վերաբերմամբ ուշադիր և զգաստ վերաբերմունք, պահանջվում է ընդհանրացումներ, առանց հանդուրժելու, թույլ տալու կոնկրետ իրակատությունից կտրված սխեմաներ կանոնադրություններ և այլն:

Մեր եպոխայի առանձնատկությունը կայանում է նրանում, վոր մենք պրոլետարական հեղափոխություն լծակով խորտակեցինք հին աշխարհի հիմքերը, փոխում ենք նրան, կառուցելով սոցիալիզմ:

«Պրակտիկ մատերիալիստի, այսինքն՝ կոմունիստի համար—գրել է Մարքսը—բանն այն է, վոր գոյություն ունեցող աշխարհը հեղափոխականացնի, վորպեսզի իրերի պեմ դուրս դա պրակտիկ կերպով ինչ դրություն մեջ նա կգտնի և փոխի նրանց («Գերմանական իդեոլոգիան»)»: Հենց դրանով էլ մենք զբաղված ենք այսոր՝ կառուցելով սոցիալիզմ, սովորելով մեր սեփական սխալների վրա, հենվելով մասսաների կամքի, եներգիտայի, քաղաքական ազդեցության անսպառ աղբյուրի վրա: Այդ պայքարում զբաղան փորձի հաշվառումն ու բացասականի քննադատությունը, պայքարը անշարժություն ու որբումով շինայի դեմ, նախաձեռնություն քաջալերանքն ու բյուրոկրատական ազավաղումներին անխընա հարված հասցնելը՝ հանդիսանում են հաջող շինարարություն անհրաժեշտ նախադրյալները:

Ուրիշ ինչո՞ւ կարելի չի բացատրել այն, վոր մենք բավարար չավտով չենք կարող ցուցադրել մասսաներին մեր իսկական նվաճումները, յեթե վոչ մեր ազիտացիայի ամբողջ մեխանիզմի անճկունությունը ու անշարժությունը, այդ անհրաժեշտ է մանավանդ այսոր, յերբ այդ նվաճումների հետ միասին դեռ գոյություն ունին անհարթություններ, բյուրոկրատական աղավաղումներ ու դժվարություններ:

Ագիտացիան կոնկրետ փաստերով պիտի ցույց տա, վոր մեր դժվարութիւնները անման, դժվարութիւններ են: Համեմատելով զեզպ ագիտացիան պետք է անխնա կերպով հարկածի ուղորտունիստներին, վորոնք աչքի յեն ընկնում են նոցա նրանով վոր տարածում, ընդհանրացնում են բացասական փաստերը չեզոքացնելով նրանց կուսակցութեան հակայական նվաճումներին, ստեղծում են կազմալուծող տրամադրութիւն, զբաղվում են բամբասանքով ու խուճապի մատնելով:

Բոլոր տեսակի ուպորտունիստները միտ են նման են այն Մովսեսին, վոր Սիւնա լեռան վրա Յեղիաի հետ ժամադրութիւն ունենալիս հնարավորութիւն ունեցալ իր աստուծո միայն «յեսելը» նւառելու: Յեղիաի խկապես, մեր ուպորտունիստները նւառում են մեր նեղափոխութեան «յեսելը», միայն այն արբերութեամբ (Մովսէսից), վոր նրանք այդ անում են կամավոր կերպով: Այդպէս է նրանց բնույթը: Ուղորտունիստը վոր հերթ է տեսնում բղավում է. «կորչում ենք», փոխանակ լրջորեն մտածելու՝ և այդ հերթերը վերացնելու միջոցառումներին դիմելու: Միթէ քիչ են այն դեպքերը, վոր հերթերն արդունք են միայն անկարող ղեկավարութեան, անհոգի բոլորակրատական վերաբերմունքի՝ ղեպի մեր կողպերատիվային և ուրիշ կազմակերպութիւնների գործերը: Ագիտացիայի դերը կայանում է հենց նրանում, վոր՝ վոչ թէ «ընդհանրապես», այլ կոնկրետ, կենդանի փաստի, ցուցադրումով հարկածի ուղորտունիստներին, մերկացնի թշնամիներին:

Մեր ագիտացիան, կարող է այդ գլուխ բերել, յեթի ազատվի իր սեփական բոլորակրատիզմից, յեթի կոնկրետ կայանից կտրված սխեմաները, կանոնադրութիւնները ծանր բեռ չդառնան մեր մասսայական ագիտացիոն աշխատանքի պրակտիկայում: Բերնք դրա համար բնորոշ որինակ. մենք նկատի ունենք խմբակային ագիտացիան, աշխատող (ավելի ճիշտ՝ չաշխատող) ագիտատորներին: Մտքակային ագիտացիայի զաղափարն, անկասկած, գործնականում կիրառելի յի: Իրվում է բոլորովին սեպ և անհրաժեշտ խնդիր. պատասխանել մասսայական ագիտատորներ, ունենալ ամեն մի կիսնարկութեան վեջ բանվոր ագիտատորների կարգը: Ագիտացիոն

աշխատանքի համար մեզ մոտ հակայական հող կա. տասնյակ հազարավոր մասսայական ագիտատորներ են հարկավոր, այն ել առաջ քաշված բանվորների և գյուղացիների շարքերից. չորս տարուց ավելի մենք զբաղված ենք խմբակային ագիտացիայով: Գոյութիւն ունի կանոնադրութիւն, վոր բլիշները շարունակ բանվորներ են առաջ քաշում ագիտակրակիները—բայց սայլը դեռ տեղից չի շարժվում: Շատ հազվադեպ բացառութեամբ խմբակային ագիտացիան անհաջողութեան է մատնվում. ինչո՞ւ. վորովհետեւ խմբակային ագիտացիան մենք չենք կարողանում կապել ձեռնարկութեան կոնկրետ կայանքի հետ. կանոնադրութիւններով զրկում ենք նրան կենդանի շնչից, կենդանի վոգուց, մարդկանց ձեռնարկներն ենք առաջ քաշում ագիտակրակիների շարքերը, ստիպում ենք ագիտատոր դառնալ նրանց, վորոնք դրա համար վոչ մի տվյալ չունին: Այսպէս սխեման խեղդում է կենդանի գործը: Բնորոշ է այն, վոր խմբակային ագիտատորները պարտավոր են ագիտացիա մղել այլանի համաձայն: Այն ինչ՝ ձեռնարկութեան ընթացքն ամեն որ անխնա կերպով բեկանում է այդ պլանը: Մտքակային ագիտատորին, համաձայն պլանի պատրաստում են, ստենք, գյուղացիական հարցի համար, այն ինչ կայանքն առաջադրել է մանր փոքրի հարցը, իսկ խմբակային ագիտատորը հենց այդ հարցի համար գինված չէ:

Ագիտատորը պետք է բազմակողմանի կերպով զինված լինի կենտրոնի Սեպտեմբերյան դիմումի հարցերով, իսկ նա համաձայն պլանի, կուսհամագումարի հանած. վորոշումներով պատրաստվում է արդյունաբերութեան հարցի մասին: Պարզ է, վոր խմբակային ագիտացիան կտրված է ձեռնարկութեան կոնկրետ կայանքից, դրա համար ել ագիտացիան, յեթի անհաջողութեան չի մատնվում, չի յի պատրաստվում: Մտքակային ագիտատորների խնդիրները մանածային կամ, որինակ, մետաղային ձեռնարկութիւններում բոլորովին տարբեր են, թեկուզ հենց այն պատճառով, վոր այս տարի ջուլհակների ագիտացիոն աշխատանքը, կապված Ֆարրիկաների կանգ առնելու հարցի հետ, պետք է այնպէս վերակազմակերպվի, վոր գործադրելի լինի հենց այդ փաստի համար:

Կյանքը չի կարող զետեղվել սխեմաների և զրված կանոնադրութունների կամ մշակված պլանների շրջանակներում: Խմբակային ազիտացիան այլ կերպ պիտի լինի զբրված:

Խմբակային ազիտացիան պետք է որգանական կոնկրետությամբ կապված լինի իր ձեռնարկության կյանքի հետ: Իսկ մարտական ուղեւորութիւնը ազիտացիան է, վոր մղվում է ձեռնարկութունների մեջ բանվորների խմբի կողմից, վորոնք մասնաձայնական ազիտատոր լինելու համար սովորներ ունեն (իսկ այդպիսիները քիչ չեն մեզ մոտ) և վորոնք հոգարակամ կատարում են այդ պարտականութիւնը: Բունի վոչ վոքի չի կարելի ազիտացիոն դարձնել: Բանվորների այդ խումբը պետք է զեկավար ունենա:

Ձեռնարկութունների մեջ վոր և է հարց ծագելիս ազիտակոլեկտիվը պետք է պատրաստ լինի, պետք է նյութերով և գիտելիքներով զինված լինի, վորպեսզի որվա հրատապ հարցերին կարողանա նիւս պատասխանել, և դրա հետ միասին, պետք է որգտադործի բոլոր հնարավորութիւնները (ձաշի դադարը, անկուսները և այլն), վորպեսզի դուրս գա ազիտատորի դերում և դրանով իսկ լինի մասնակցի կազմակերպողի դերում: Կամ, յեթե կուսակցական կազմակերպութիւնը ձեռնարկութիւնն առաջ դնում է այս կամ այն խնդիրը, այդ դեպքում ազիտակոլեկտիվը պետք է աշխատի առանց ընդհատումների՝ վորպես ժամացույցի մեխանիզմ:

Դեկավարը առաջադրված հարցերի վերաբերմամբ ազիտակոլեկտիվին պիտի զինի նյութերով տա ընտրուում, պիտի հետևի, վոր ազիտատորը իր ժամանակին տեղում լինի: Ահա թե ինչու այդ կենդանի, ուղեւորութիւնը աշխատանքի համար վոչ մի կանոնադրութիւն պետք չէ, մասնավանդ պլան:

Ձեռնարկութիւնն բանվորների աչքում հեղինակավոր կարող է լինել միայն այն ազիտատորը, վորը ժամանակին յեզմիտ կերպով կբացատրի ու կպատասխանի նրանց հետաքրքրող հարցերին: Հարցը միայն այդպես զննելով է, վոր կարելի չի իրական արդյունքների հասնել, պրոլետարական մասնաձայնական ազիտատորների իսկական կազմեր պատրաստել:

Կանոնադրութիւնը, պլանը, սխեմաները և այլն կսպանեն այդ կենդանի գործը: Այլապես ինչով բացատրել այն հանգամանքը, վոր խմբակային ազիտացիան չորս տարվա, ընթացքում չհարժվեց իր տեղից:

Փորձված ազիտատորներ պատրաստելու անհրաժեշտութիւնն մասին մի անգամ չէ վոր գրել, խոսել է Լենինը: Մասնաձայնական ազիտատորները ծնվել են սոցիալիզմի համար մղվող պայքարում, և նրանց դերն այդ պայքարի պատմութիւնն մեջ անգնահատելի չէ: Ո՞վ չի ձանաչում բանվոր Պրոլետար Ալեքսեևի պրոլետարական ամբիոնը:

«Բարձրանում են միլիոնավոր բանվորների մկանուտ ձեռները և խորտակվում, վրշվում է զինվորների սվիններով պաշտպանվող դեսպոտիզմի լուծը»:

Պրոլետարական հեղափոխութիւնը բանվոր դասակարգի շարքերից առաջ է քաշել մեծ քանակութիւնով աղանդավոր կազմակերպիչներ և ազիտատորներ:

Սոցիալիզմ կոտորող, իր քաղաքական ու կուլտուրական մակարդակը բարձրացնող բանվոր դասակարգի շարքերում դեռ շատ կան այդպիսի քաղնված ուժեր: Խմբակային ազիտացիայի խնդիրն այն է, վոր յերևան բերի, բարձրացնի այդ ուժերը, դաստիարակի նրանց և պրոլետարական յերկրին տա պրոլետարական հետտորների նոր կազմեր:

Կոլխոզային շարժումը մեր առաջ խնդիր է դնում՝ կոլխոզներում ևս հայտնաբերել այդ ուժերը: Մենք այժմ իսկ պետք է համենք այն բանին, վոր կոլեկտիվացման համար՝ մենատնտեսների, չբանվորների և միջակների աուղիտորիաների (լսարան) առաջ կանգնած լինեն լավագույն ազիտատորներ հենց իրանցից՝ կոլխոզիկներից:

Այդ բոլոր կարելի չի գլուխ բերել, յեթե խմբակային ազիտացիան զրված լինի նոր հունի մեջ, յեթե նպ կտրված չլինի կոնկրետ կյանքից և իր տեմպերով յետ չմնա սոցիալիստական շինարարութիւնն տեմպերից:

Մենք թեևսկոխել ենք կուլտուրական հեղափոխութիւնն շրջանը: Բայց ի՞նչպես ենք մեր ազիտացիոն և կազմակերպչական մասնաձայնական աշխատանքի պրակտիկայում մասնակից դարձնում կուլտուրական հեղափոխութիւնն խնդիրն:

բին բանվորական մասսաներին, ֆաբրիկաներին և գործարաններին: Չափազանցություն չի լինի յեթե ասենք, վոր այդ կուլտուրական հեղափոխութեան խնդիրները մեծ շրջութայի շատ ողակները կտրված են ֆաբրիկայից, գործարանից յեւ բանվորական մասսաներից:

Վերջերք կուլտուրական ֆրոնտից այնպիսի որինակ, ինչպիսին պրոլետարական գրականությունն է: Արդյոք պրոլետարական գրողների հիմնական թերությունն այն չէ, վոր նրանք, ինչպես կանոն, կտրված են ֆաբրիկայից և գործարանից. Առ այժմ միայն փորձ է կատարվում այդ «ճեղքվածքը» վերացնելու համար: Մենք մտադիր չենք այդ «ճեղքվածքի» ամբողջ հանցանքը գցել պրոլետգրողների աստոցիացիայի վրա: Կուսակցական և պրոֆկադմակերպություններն եւ, մասնավորապես գործարանային, արդյոք վորոշ պատասխանատվություն չեն կրում այդ խնդրում: Չի վոր, ըստ սովորութեան, պրոլետարական գրականութեան մասին (հազվադեպ ըացառութեամբ համադատության յերեկույթների կադմակերպումը) վոչ մի գործարանում, վոչ մի ֆաբրիկայում հարց չի յեղել դրված: Վլադիմիր Իլիչի անվան գործարանի բանվորների դիմումը (Замоскворечье) Ռուսաստանի պրոլետգրողների միութեան գործերի վիճակի մասին պատահական չէ, վոր աննկատի անցավ:

Սոսում ես ըջջի քարտուղարի հետ հարցնելով, թե ինչո՞ւ ձեր ձեռնարկութեան բանվորները մորթիլիզացիայի չեն յենթարկված այնպիսի խնդիրներ լուծելու համար, ինչպիսին են կինոն, պրոլետարական գրականությունը, թատրոնը, գպրոցը:

— Ի՞նչ եք ասում, մենք ժամանակ չունենք, մենք ըզբաղված ենք պրոմֆինպլանով:

Նույնպիսի պատասխան ես ստանում, յերբ հարց ես տալիս գործարանների խորհրդային ապարատի վրա ունեցած շեֆութեան մասին, կուսակցութեան 16-րդ համագումարի նշած՝ բանվորների այդ կարևորագույն շարժման մասին, վոր վերջին ժամանակներս քանի գնաց թուլացավ՝ շնորհիվ մի շարք կուսակցական և պրոֆկադմակերպությունների անթուլատրելի վերաբերմունքի և ԲԳՏ-ի որդանների չեֆութեան ղեկավարութեան նկատմամբ յեղած թուլութեան:

Պրոմֆինպլանը ստորին կադմակերպությունների աշխատանքում կարևորագույն և վճռող հարց է: Բայց միթե ձեռնարկութեան ազդեցիկոն, մասսայական, կուլտուրական աշխատանքը՝ պրոմֆինպլանի համար մղվող բանվորների պայքարի անբաժան մասը չի կազմում: Միթե՞ այդ մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացումը չի նպաստում այդ պայքարին: Կինոն, թատրոնը, պրոլետարական գրականությունը: Կուլտուրական հեղափոխութեան այդ բոլոր լուծակները հասկանալու և յուրացնելու համար՝ բանվորները դեռ ի վիճակի չեն. ճիշտ է ասում են թույլ ձայնով և վոչ բոլորովին վորոշակի, արդարացնելու համար մեր բոլոր կադմակերպությունների այն հետ մնալը, վոր յերևան են բերում մասսաներին՝ գործարանների, ֆաբրիկաների ակտիվ աշխատանքի և կուլտուրական հեղափոխութեան/բոլոր հիմնարկները վերահսկողութեան գործին ներգրավելու վերաբերմամբ:

Սակայն հասունութեանը, ի վիճակի լինելը, ինչպես պնդում եր Լենինը, վայելչամտութեամբ կամ վկայականով չէ վոր վորոշվում է, նա հաստատվում է վորձով, պրակտիկայով: Իսկ վորձն ու պրակտիկան հակառակն են ցույց տալիս: Բրիգադները, վորոնք դտում էլին ժողովրդական լուսավորութեան ապարատները, մեծ չափով ցույց տվին իրենց ընդունակութունը յուրացնելու նաև կուլտուրական հեղափոխութեան հետ կապված խնդիրները: Չափազանց հետաքրքրական է բանվորների քննադատությունը, վորը մենք հրատարակում ենք բրոշյուրի ձևով: Մենք ի նկատի ունենք «Московский рабочий»-ի հրատարակած անկետան, վոր լեցված է Մոսկվայի մի քանի գործարանների ու ֆաբրիկաների բանվորների կողմից:

Տրյուխտրնայի բանվորները քննադատում են Ա. Կարավակայի «ցեխերը ձանապարհին» բրոշյուրը: Այդ բրոշյուրում Կարավայեվան նկարագրում է նրանց ֆաբրիկան. տարածայնութուն է ծագում. ավելի շուտ՝ քննադատում են. Չի կարելի սոցմրցումը գնահատել վտաքի վրա՝ մատիտն ու նկարները ձեռքին: Դա քննադատութեան ընդհանուր բնույթն է: Մեջ բերենք մի շարք բանվորական հետաքրքրական նկատողություններ:

—«Իմ կարծիքով դա գրքույկ չէ, այլ միայն հում նյութ ապագա գրքի համար»:

—«Ամբողջ գրքի միակ արժեքավոր տեղը նիկոլի-Վաս-գանկովայի փակման առթիվ կայացած ժողովի նկարագիրն է: Հեղինակը արտադրությունը չի ճանաչում: Իսկ մար-դիկ... Կարավաևան այդ մարդկանց բաժանում է խարտ-յաշներին, թուխերին, կարմրայտերին, ճաղատներին և մագա-վորներին: Այդպիսի «պատկերներ» նկարել կարող է նույնիսկ դպրոցականը»:

—«Կարդում ես ու փնտրում ծանոթ բանվորներին, սա-կայն բացի շեկերից ու ճաղատներից՝ կյանք չի յերևում»:

—«Կարավաևայի գիրքն անհաջող է. գիրքը վոչինչ չի սովորեցնում և նույնիսկ «բարի զգացմունքներ չի արթնա-ցնում իր քնարով», ինչպես և չի արթնացնում մասսանե-րի ցասումը: Այդ գիրքը կիսել է և ուրիշ վոչինչ»:

Իանվորները, քննադատելով Ազրոնովսկու «հրդեհը Պրոկոպիչնայում» գրքույկը՝ գրում են.

—«Յեռ իմ կողմից կառավարիչի ավելի լրիվ լուսաբա-նել վոչ միայն կուլակի հարձակումը, այլև չքավորի ու մի-ջակի կողմից մղվող պայքարը նրա դեմ: Գրքում այդ մա-սը քիչ է, նույնիսկ բոլորովին բացակայում է»:

—«Իմ կարծիքով, յեթե ճիշտ կարգացվի այն, շատերը կարող են հասկանալ, թե ինչպես հասարակ քրեական դեպ-քից կարելի չէ քննելիս, դասակարգային պայքարի քաղա-քական ցայտուն դեպքի աստուր բաց անել»:

Մենք հնարավորություն չունենք մեջ բերելու դրանից շատ ավելի հետաքրքրական, գործին վերաբերյալ նկատո-րություններ և առաջարկություններ՝ անկետային տվյալնե-րից: Իսկ իսկական մասսայական քննադատություն է, վորն, ի դեպ՝ մեր պարբերական մամուլի եջերում չի յերևում:

Բոլորովին ակներև է, վոր յեթե մեր բոլոր կազմակեր-պությունները փորձեն ներգրավել բանվորական մասսայի աճող ակտիվությունը՝ կուլտուրական հեղափոխության հա-մար մղվող պայքարի հունի մեջ, մենք կունենանք ավելի մեծ նվաճումներ այդ պայքարում:

Պետք է հաղթահարել անշարժությունը և հասնել այնպի-սի դրուժյան, յերբ մեր ֆարբիկաններն ու գործարանները կլինեն ակտիվ մասնակիցներ մեր կինոյի, թատրոնի և շի-նարարությունից, որգանապես կապված կլինեն մեր պրոլե-տարական գրականության զարգացման ու աճման հետ, յերբ գործարաններում ու ֆարբիկաններում կկոփվեն կուլտուրա-կան հեղափոխության մարտիկների վաշտեր: Ինչպե՞ս չկազ-մակերպել ձեռնարկություններում ագիտ քրիզաղներ, վո-րոնք աշխատելով գործարանային կազմակերպության դե-կավարություն տակ՝ կլինեյին այն լծակային մեքենան (ТАРАН), վոր առաջ կը շարժեր բանվորական մասսային՝ յուրացնելու կուլտուրական ագիտ բրիգադի կարևորա-գույն խնդիրները:

Այդ խնդիրներին վրա հենվելով՝ և կինոն և թատրոնը և պրոլետգործիչների միությունը մոբիլիզացիայի կյանքար-կեյին գործարանների և ֆարբիկանների հասարակական կազ-միքն այն կոնկրետ խնդիրների շուրջը վորոնք դրված են այդ կազմակերպությունների առաջ:

Այդ խնդիրները մեծ են և դրանց հարցադրումը անհրա-ժեշտ է: Մենք նույն իսկ տարրական կուլտուրայի համար համարյա վոչ մի ագիտացիա չենք մղում: Գործարանային ճաշարաններում կեղտոտությունը բոլորովին բացառություն չէ: Այդ կեղտոտությունն, իհարկե, չի կարելի վերագրել ու-յեկտիվ դժվարություններին: Իսկ ամենից շատ խմորները, ամենից հեռու քվոյոները, ամենից լավ հայհոյներն արդյոք «լավ ջահեյների» շարքերում չեն դասվում:

«Մադերոգոդիա» ինչպես Շչեդրինն էր սիրում արտա-հայտավել:

Մեր ագիտացիոն մասսայական աշխատանքն արդյոք լայն մասաների մեջ գլուխ բերե՞լ և այն հասարակ ճշմար-տությունից յուրացումը, վոր «արտահայտությունների» դեմ մղվող պայքարը՝ դա նույնպեսի անհրաժեշտ նախադրյալ է հոգեկան կուլտուրայի համար, ինչպիսին վոչինի և կեղտի դեմ մղվող պայքարը ֆիզիկական կուլտուրայի համար: Հա-վանական է՝ այնտեղ ևս կըհանդիպես «առարկություն», դա, իբր թե, փոքրիկ բան է, մենք զբաղված ենք պրոմֆինսյալ-նով:

Տարրական կուլտուրայի համար մղվող պայքարը սոցիալիստական շինարարութեան տեմպերի համար մղվող պայքարի բաղկացուցիչ մասն է կազմում: Բայց տարրական կուլտուրականութիւնը նվազագույն չափ է: Այնինչ՝ կուլտուրական նեղափոխութիւնը հարցերը դնում է անսահման կերպով լայն ու խորը:

Պրոմֆինպլանի համար պայքար մղելն անհրաժեշտ է, պետք է. բայց դրա հետ միասին անհրաժեշտ է պայքարել նաև մաքուր ճաշտարանի համար, «մազերոզնովիայի» դեմ և այն «լավ ջահել»-ի դեմ, վորն՝

«ինչ կոմսոմոլիատ է, վոր աղջկան չսլիտի կճմթի»:

Ագիտացիոն, մասսայական, կուլտուրական աշխատանքի խնդիրը մասսաներին դաստիարակելն է: Դաստիարակել նրանց սոցիալիստական նոր սկզբունքներով:

Այդ բոլորը ճշմարտութիւն է, կասեն մեզ:

Բայց «ճշմարտութիւնը պետք է կրկնվի հենց միայն նրա համար, վոր մոլորութիւնն էլ է կրկնվում» (Գյոթե):

Իսկ մոլորութիւնն աշխատանքի պրակտիկայում այն է, վոր վերոհիշյալ ագիտացիոն մասսայական աշխատանքի բոլոր խնդիրները թերագնահատում են:

Մասսաներին վերադաստիարակել կարելի չէ միայն այն դեպքում, յեթե միաժամանակ պայքար մղենք տարրական կուլտուրայի, գջլոդների, լոգրների և նրանց դեմ, վորոնց համար նավահանգիստը միշտանական խաղաղ կյանքն է: Վերադաստիարակել՝ այդ նշանակում է միաժամանակ պայքար մղել հարվածայինների համար, սոցիալիստական շինարարութեան ենտուզիաստների համար և նրանց դեմ, վորոնք շինարարութեան բոլջեկիյան տեմպերի համար պայքարելու փոխարեն դեռ շարունակում են իդեալականացնել «Իուլինուշկան»:

«Իսկ մեր ոուս մուժիկը, յեթե չի կարողանում աշխատել, Իր հայրենի գուբինուշկան է ծորացնում»...

Մեր ագիտացիան պիտի կարողանա հարվածայիններին ջոկել և գջլոդներին հալածել ու հարվածել: Մեր ագիտացիան պիտի կարողանա ցուցաբերել պրոլետարական ինքնաքննադատութեան իսկական մարտիկներին և վոչնչացնել

Սոլշալիններին, վորոնք յերբեմն հարութիւն են առնում կուսակցականի կերպարանքով:

Հայտնի դրող Նիկիֆորովի վեպերից մեկի հերոս Ինյակինը ատելութեամբ լցված դեպի մեշչանութիւնը գրել է իր մորը.—

«Մայրիկ, մեր բաժանման ժամանակ ձեր տված ցուցմունքների համաձայն բոլոր խորհուրդները, այսինքն ուժեղ մարդկանց սպասավորելու մասին իմ կողմից հնարավոր ճշտութեամբ կատարվում են»:

Իսկ ինչքան Ինյակիններ կան մեզ մոտ, վորոնց մենք չենք պախարակում և ինչքան սոցիալիստական աշխատանքի ենտուզիաստներ կան մեզ մոտ, վորոնց մենք չենք կարողանում ինչպես հարկն է ցուցադրել մեր յերկրում սոցիալիզմ կառուցող միլլիոններին:

Ագիտացիոն—մասսայական աշխատանքի՝ խնդիրները բազմակողմանի չեն: Սոցիալիստական շինարարութեան մեջ ագիտացիայի դերը անչափ մեծ է: Այդ դերի թերագնահատումը ուղիղ ճանապարհով տանում է դեպի ոպորտունիզմ: Սոցիալիստական շինարարութեան համար, մեր կուսակցութեան վերցրած տեմպերի, ագիտացիայի հետ մնալը անթույլատրելի չէ:

Ահա թե ինչու կուսակցական մարմինների ագիտ-մասսա-բաժինները պետք է անեն այն բոլորը, ինչ իրենցից է կախված, վորպեսզի համեն բոլջեկիյան իսկական տեմպերին նաև ագիտամասսայական աշխատանքներում:

* * *

Պրոլետարական դիկտատուրայի բոլոր մարմինների և կուսակցական ապարատի վերակառուցումը մասնավորապես կապված է այն պայմանների հետ, վոր գոյութիւն ունին մեր յերկրում քաղաքում և դյուրում սոցիալիզմի աճման և դասակարգային պայքարի սրման կապակցութեամբ և այլն:

Աշխատանքի հին մեթոդները անպետք դուրս յեկան, և սոցիալիզմի համար մղվող պայքարի ներկա շրջանում իրենց չարդարացրին: Նա, ով ուսումնասիրել է բանվորական շարժման պատմութիւնը, գիտի վոր կուսակցական, հեղափոխական աշխատանքի ձևերը փոխվում են այն կոնկրետ

խնդիրները անհրաժեշտ է փոփոխել կանգնում են բանվոր դասակարգի առջև սոցիալիզմի համար մղվող պայքարի սովյալ շրջանում: Այն շրջանը, վոր մենք ենք ապրում ներկայումս, դա սոցիալիզմի գործնական կառուցման շրջանն է, ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանն է: Կուսակցության նիստերի քաղաքականությանը միտ էլ պահանջել է նիստեր կազմակերպչական դեկլարացիան: Կուսակցական ապարատի վերակառուցումը մեր աշխատանքների մեջ նկատելի ունի այնպիսի կազմակերպչական գործունեություն, վորը պատասխաններ այսօրվա քաղաքական խնդիրներին, քաղաքական դրույթներին:

Ինչպիսի խնդիրներ են մեր առջև կանգնած: Ամենից առաջ խնդրատրիալիզացիայի արագացրած տեմպերի ապահովումը, վորը իր արտահայտությունն է գտել կուսակցության «5 ամյակը 4 տարում» լողունգում, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կուլակության լիկվիդացիան վորպես դասակարգի, պրոլետարիատի կազմակերպող և կազմակերպչական դերի ուժեղացումը և ինչպես այս կարևորագույն խնդիրների կենսագործման նախապայման՝ մեր կուսակցական շարժելի մարտնչականության պահովումը:

Վորպեսզի սոցիալիստական շինարարությունը մեր ապրած շրջանում, կատարենք այդ խնդիրները, պահանջվում է մեր վողջ աշխատանքների արժանատի վերակառուցումը:

Պետք է արձանագրել, վոր կուսակցական ապարատի, ինչպես նաև պրոլետարական դիկտատուրայի մյուս որդանների աշխատանքների այդքան անհրաժեշտ վերակառուցումը մեծ մասամբ անց է կացված միայն ձևականորեն:

Վերլուծման յեթարկելով կուսակցական, պրոֆեսիոնալ կազմակերպությունների աշխատանքները, խորհուրդների, կոոպերացիայի, հասարակական կազմակերպությունների աշխատանքները կգաս այն յեզրակացությունը, վոր մեզ բն էլուրյան դեռ յեմք վերակառուցվել:

Ցեթե հարց դնենք այն մասին արդյոք կուսակցիկները յերեսները դարձրել են դեպի արտադրությունը, ապա ինարկե մենք այդ հարցում վճռական առաջախաղացումներ

ունենք: Մոցմրցումը և հարվածայնությունը, հանդիպակաց արդիւնպանը պայքարը այն հրահանգների կենսագործման համար, վորոնք տրված են կենտկոմի Սեպտեմբերյան դիմումում, այս ուղղությամբ բարձրացած ակտիվությունն արդիւնքը՝ ասում է այն մասին, վոր մենք անկասկած հաջողություններ ունենք: Բայց յեթե հարց դնենք այն մասին, թե ինչպես են հիմնարկներում աշխատանքները վերակառուցվել, հատկապես ագիտմանայական աշխատանքները՝ պետք է ասել, վոր մեծ մասամբ այդ վերակառուցումը վորպես կանոն անց է կացվել ձևականորեն:

Կոնկրետ փաստ: Մոսկվայի խոշոր գործարաններից մեկի, «Մերսի Մոլոտ»-ի բլջի ագիտման սեկտորի վարիչը հետադրոման ժամանակ հայտարարել է, վոր ծանրությունները ցելս, հատկապես խմբակ և բրիգադ դեռ չի տեղափոխված:

Նա այդ բացատրում է նրանով, վոր «կուսաշխատանքի վերակառուցման և աշխատանքի ծանրության կենտրոնը ցելսը տեղափոխելու խնդիրների հասկանալը, դեռ շատերի գիտակցությունը չի հասել, վոր այս իրեան իր ամբողջ ծավալով հասկացել է ղեկավար ակտիվի փոքր մասը միայն, մինչև այն ժամանակ, յերբ վոր այս իրեան չմբռնեն իրենք մաստաները և չսկսեն իրենք այն կենսագործել կյանքում, մինչև այն ժամանակ աշխատանքի ձևերի վերակառուցումը կմնա վորպես մեռած գործ»: Այս հայտարարությունը բնորոշ է ինարկե վոչ միայն մե գործարանի համար:

Ագիտմանայական աշխատանքը հիմնարկներում անբավարար է դրված: Վորոնք են հիմնարկներում բլջիկները բյուրոները ընտրած ագիտմանայական սեկտորների խնդիրները և վորոնք պետք է հիմք ծառայեն այդ սեկտորների աշխատանքում:

Ագիտացիոն աշխատանքներում բյուրոյիկյան սեմպերին հասնել — նեանակում է հարցը յուծել, վոչ միայն փակակական, այլ յեկ վարակական սեակիսից: Մեր ագիտացիայի վորակը բացարձակորեն անբավարար է: Այս տեղամասում հետմալը հետևանք է ագիտացիայի քաղաքական դերի թերափնանալը հետևանք և ագիտացիայի քաղաքական դերի թերափնանալը և նոր պայմաններին, հատկապես սոցիալիզմի

համար մղվող պայքարի ներկա շրջանի առանձնահատկությունների համեմատ ագիտացիայի վերակառուցման անհրաժեշտությունը չհասկանելուն:

Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր սոցիալիստական շինարարություն հսկա վերելքը նշանակալից չափով բարձրացրել է բանվորների կուլտուրական մակարդակը և ակտիվ քաղաքական, հասարակական կյանքի յե կոչել բանվորների նոր շերտեր: Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր գյուղում տրակտորը և կոլլեկտիվացումը հանդիսանում են հեղափոխականացնող ֆակտորներ, վոչ միայն գյուղացիական տնտեսությունը եկոնոմիկայում: Բարձրանում է գյուղացիական մասսաների կուլտուրական մակարդակը, փշրվում են գյուղական կյանքի դարավոր աղշուժյան ամբուժյունները գյուղացին բանվոր դասակարգի ղեկավարությունը ընտելանում է սոցիալիստական շինարարությունը:

Այդպիսով առանձնահատկությունը նրանում է, վոր միլիոնավոր աշխատավորներ մտանկցում են յերկրի փաղափակն յեվ տնտեսական կյանքին:

Այս պայմաններում ագիտացիայի և մասսայական աշխատանքների դերը անչափ աճում է և խնդիրը կայանում է նրանում, վոր ագիտամասսայական աշխատանքը զբվի սկզբունքային բարձրության վրա: Յեվ այստեղ պետք է վճռական հարված հասցնել ոպորտունիզմին: Միթե ագիտացիայի քաղաքական դերի թերագնահատությունը այսօր (ինչպես և միշտ) և հատկապես այսօր ոպորտունիզմի ափսոսելի արտահայտությունը չէ: Չե՞ վոր նա, ով թերագնահատում է բոլշևիկյան ագիտացիայի դերը ստորացնում է այն, նա ոգնում է դասակարգային թշնամու ագիտացիային:

Ագիտացիայի տեմպերի թուլացումը համազոր է մասսաների վրա բոլշևիկյան ազդեցություն թուլացմանը: Այս թուլացումը ընդդրում է և մասսաներից կտրվածությունը, հանդիսանում է մասսայական աշխատանքի թուլության ցուցանիշ:

Կուսակցական ապարատի վերակազմումը պատահականորեն չէ, վոր ագիտացիան կապել է մասսայական աշխա-

տանքի հետ, մասսաների մեջ կազմակերպչական աշխատանքի հետ, մասսաների մեջ կազմակերպչական աշխատանք տանելու հետ: Այստեղ ակներև է որդանական փոխադարձ կապը: Ագիտացիան չի կարելի անհրաժեշտ բարձրություն վրա դնել, առանց մասսաների մեջ կազմակերպչական աշխատանք տանելու: Յեվ ընդհակառակը, չի կարելի լավ կազմակերպել մասսայական աշխատանքը, առանց լավագույն կերպով դրված քաղաքական ագիտացիայի: Յուրաքանչյուր աշխատող այդ գիտի, հարկադրված է իմանալ քաղաքում և գյուղում աշխատելու ժամանակ կոնկրետ փաստերի հետ ընդհարվելով: Մասսայական աշխատանքի խընդիրն է—կազմակերպել մասսաներին և ներգրավել նրանց սոցիալարարություն մեջ:

Այս նպատակով պետք է մասսաներին վերադաստիարակել: Այս պարտականությունը ընկնում է ագիտացիայի և պրոպագանդայի վրա:

Լենինը բոլորովին պարզ և հատուկ ասել է այս մասին—

«Կոմունիզմը հանրամատչելի պետք է դառնա բանվոր դասակարգին—վորպես սեփական գործ: Մենք ձեռք կբերենք այն, ինչ պետք է, կհաղթահարենք բոլոր արգելքները, վոր մեզ թողել է հին հասարակակարգը և վորոնց միանգամից դեն շպրտել չի կարելի: Պետք է վերադաստիարակել մասսաներին, իսկ նրանց վերադաստիարակել կհարող է միայն ագիտացիան և պրոպագանդան. պետք է մասսաները կապել առաջին հերթին տնտեսական կյանքի ընդհանուր շինարարություն հետ»:

Արժի ընդդեմ, վոր կուսակցական ապարատի վերակառուցումը մինչև հիմա շատ կազմակերպություններում անց է կացված ձևականորեն, մեքենայորեն: Հատկապես գոյություն ունի ագիտամաս բաժինների դերի թերագնահատություն մի կողմից և մյուս կողմից ել այդ բաժինների աշխատանքներում դեռ ևս չկա ագիտացիայի և մասսայական աշխատանքի փոխազդեցություն: Մինչդեռ մասսաների մեջ կազմակերպչական աշխատանքի ագիտացիայի հետ որդանապես ներդաշնակելու մե և կայանում կուսակցական ապարատի վերակառուցման ամբողջ իմաստը:

Ազիտացիայի բաժիններն ներքին կապը դեռ կտրված և կադմաստայական աշխատանքներն ընթացիկ խնդիրներն են: Այդ կտրվածությունը բոլորովին անթույլատրելի յե: Որինակ. անդամատակարարման դժվարությունների հաղթահարումը որակարգի հարցն է դնում կոոպերացիայի աշխատանքների վրա մասսայական կազմակերպված հսկողություն մասին: Վորպեսզի կազմակերպել մասսաներին, անհրաժեշտ է խոշոր կազմակերպչական աշխատանք: Բայց չե վոր մինչ դրա անցկացնելը անհրաժեշտ է մասսաներին բացատրել մեր աճման դժվարությունների հետ կապված հարցերը. անհրաժեշտ է գործնական որինակներով ցույց տալ ինչպես լավագույն հսկողություն կազմակերպել և այլն: Առանց իր ժամանակին ազիտացիոն աշխատանք կատարելու, դժվար է մասսաներին կազմակերպել, կոոպերացիայի աշխատանքների վրա անհրաժեշտ մասսայական հրահողություն կազմակերպել: Հետ է մնում ազիտացիան, անխուսափելիորեն հետ են մնում և կազմակերպչական աշխատանքները:

Վերն է հարցի արմատը: Այնպիսի ազիտացիայի կազմակերպումը, վորը տա մասսաների վրա բոլորակցան ազդեցություն իրական արդյունքներ: Ազիտացիան պետք է ձգտի և հասնի նրան, վոր կուսակցության լոզունգները դառնան մասսաների լոզունգներ: Արմատը նրանումն է, վոր ստորաբաժանվի մեր ազիտացիան: Խնդիրը դժվար է, բայց լուծելի և բացարձակապես անհրաժեշտ:

«Ամեն մի պրոպագանդիստի, ամեն մի ազիտատորի արվեստն էլ հենց նրանումն է կայանում,—ասում է Լենինը,—վոր լավագույն կերպով ազդի տվյալ առաջիտորիայի վրա, դարձնելով նրա համար վորոշ ճշմարտություն. հնարավոր չափով համոզիչ, հնարավոր չափով պլուրբիստիկ, հնարավոր չափով շոշափելի և ամուր տպավորող» (Լենին. հատ. XI, II մաս. յերես 432):

Ընկ. Ստալինը «Դեպի Հոկտեմբերը տանող ճանապարհների վրա» գրքի առաջաբանում գրել է «Հեղափոխություն հաղթանակի համար, յեթե այդ հեղափոխությունը իրոք ժողովրդական հեղափոխություն է, վոր ընդգրկում է միլիո-

նավոր մասսաներ, բավական չե միմիայն կուսակցական լոզունգների ճշտությունը: Հեղափոխություն հաղթանակի համար պահանջվում է մի անհրաժեշտ պայման ևս—այն է —վորպեսզի իրենք մասսաները սեփական փորձով համոզվեն, վոր այդ լոզունգները ճիշտ են: Միայն այդ պայմանում կուսակցություն լոզունգները կդառնան հենց իրենց մասսաների լոզունգներ»:

Հաճախ մեր ազիտացիոն աշխատանքի ժամանակ մենք քիչ ենք հաշվի առնում այն առաջիտորիան, ուր մենք ազիտացիա յենք անում, չգիտակցելով այն բանը, վոր մասսաների համար դեռ անհասկանալի յե այն ինչ հասկանալի յե դառնում ավանգարդի համար. իսկ Լենինը ասել է.—

«Չե վոր քիչ է մեզ «ավանգարդ», առաջավոր ջոկատ անվանելը. պետք է գործել այնպես, վոր բոլոր մնացած ջոկատները տեսնեն և հարկադրված լինեն ընդունել, վոր մենք առաջ ենք գնում»:

(Լենին հատ IV յերես 425).

Միևնույն հարցը վորակավորված մետաղագործին, սեզոնային կառուցողին գյուղից ֆաբրիկա և գործարան նոր յեկող բանվորին, սովխոզի բանվորին բացատրելիս բոլորովին այլ կերպ պետք է կիրառել ազիտացիոն ազդեցության մեթոդը: Սրանումն է և բանավոր և գրավոր ազիտացիայի արվեստը:

Այսօրվա իրագրությունն առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր կարողանալ ստորաբաժանել աշխատանքը հիմնարկի ներսում նույնպես: Դիտեցեք Մոսկվայի Չերժինսկու անվան (Կրասնայա Պրեսնյա) մետաղագործարանը: Կարելի յե յենթադրել, վոր դուք այնտեղ կդատահեք ավելի շատ հին պրոլետար-մետաղագործների կազմերի: Իսկ իրականում ձեր առաջ է մի առաջիտորիա, վորը իր կազմով խոշոր չափով յերիտասարդներից է բաղկացած, վորոնք վաղուց չե, վոր գործարան են մտել: 1800 բանվորներից 800-ը յերիտասարդներ են: Միթե այս իրադրությունը ազիտացիոն աշխատանքի առանձնահատուկ մոտեցում չի պահանջում:

Փաստերը ասում են այն մասին, վոր հենց աշխատանքը յերիտասարդության հետ այս դործարանում վատ է տարվում:

Պետք է հասկանալ, վոր մեզ մոտ «ընդհանրապես» առաջնորդող գոյություն չունի, ինչպես գոյություն չունի «ընդհանրապես» ընթերցող: Այլ կա սոցիալական, կուլտուրական և հոգեբանական վոչ բազմատարրություն:

Ազիտացիոն ներգործություն միջոցները պետք է գործադրվեն համապատասխան առաջնորդանքների, պետք է փոփոխվեն ազիտացիայի ուղեկառի սոցիալական պայմանների փոփոխություն առնչությամբ: Ազիտացիոն ներգործություն միջոցը, վորը յերեկ իրեն արդարացրել է կարող է այսօր դառնալ ազիտացիայի արգելակ:

Այս բոլորը վերաբերվում է վոչ միայն ազիտացիային և պրոպագանդային, այլ և կազմաստայական աշխատանքներին:

Միթե հաճախակի չեն այն դեպքերը, յերբ լրիվ չեն ըմբռնում ազիտատորի ճառը, վորոհետև այդ ճառում ասված շատ բաները առաջնորդային անհասկանալի յե:

Հաճախ է հիշվում անմահ Գոգոլը վորը «Իիկանկայի մոտակա խուտորների յերեկոներ» գրքի առաջարանում գրել է.—

«Յեղել է ժամանակ, մատը գրքին և դրել, նայել է մատի ծայրերին և գնացել է խորամանկորեն պատմել տպված գրքերից սերտածր: Հաճախ լսում ես, լսում, մտածում, քննելի մեջ ընկնում: Բայց վոր սպանելու յել լինես վոչինչ չես հասկանա»:

Ազիտացիայի խնդիրն է ներգործել սվյալ առաջնորդայի վրա: Դրա կապակցությամբ անոգուտ չի լինի հիշել մի քանի դեկոցողների արհամարհական աղայական վերաբերմունքը գրավոր հարցերին պատասխանելու վերաբերմամբ:

Առաջնորդան առանց ուշանալու հարցերով գիրքորոշվում է գեկոցման նկատմամբ: Գրավոր հարց են տալիս այն մասին ինչ վոր անհասկանալի յե, գրավոր հարցերում վիճում են, խճճող հարցեր են տալիս և այլն: Առաջնորդ-

այի հարցերին պատասխանելը գեկոցողի աշխատանքի անհամեմատ կարևոր մասն է: Բայց նա չկատարելով այդ, հարցը վճռում է միայն կիսով չափ:

—Ժամանակ չունենալու պատճառով հարցերին յես չեմ պատասխանի:

—Յես կպատասխանեմ միայն մի քանի հարցերի: Հարցերին յես կպատասխանեմ մամուլի միջոցով (ավաղ այս խոստումը համրյա թե յերբեք չի կատարվում):

Այս բոլորը վորպես կանոն տեղի յե ունենում բոլոր ժողովներում:

Ազիտատորը գեկոցում տալով՝ համոզված է նրանում, վոր իրեն հասկանում են այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Դա իհարկե մոլորություն է: Ազիտացիայի ըմբռնման չափերը տարբեր են առաջնորդայի բազմատարրության շնորհիվ: Ամեն մեկը ըստ իրեն է ըմբռնում, քննադատորեն մշակում է իր գիտակցության մեջ, հարմարեցնում է իր կարծիքներին, այս կամ այն դրությունը դատում է ըստ իրեն:

Ահա թե ինչու պետք է պատասխանել, ժխտել հակառակումները, բացառել անհասկանալին, վորպեսզի ապացուցել կուսակցության լոզունգները ուղղությունը, ճշտությունը: Պետք է պայքարել սխալ լոզունգի դեմ կասկածանքի, տատանումների դեմ:

Ահա թե ինչու հարցերին պատասխանելը հաճախ վնասող յե է խաղում և առաջնորդային ոգնում է լավ ըմբռնել առարկան, վորոհետև վոչ միայն առաջադրված է ճիշտ գրությունը, այլ և ժխտված ու ջաջախված է սխալը:

Ահա թե ինչու անթույլատրելի յե տրված հարցերին պատասխանելու նկատմամբ արհամարական—աղայական վերաբերմունքը: Բայց յեթե ազիտացիայի խնդիրը կայանում է նրանում, վոր մասսաները, վոչ միայն արտաքուստ ըմբռնեն, այլ և յուրացնեն առարկան, վորպեսզի կուսակցության լոզունգները դառնան լայն աշխատավորական մասսաների լոզունգներ, ապա ազիտացիոն մասսայական աշխատանքների մեջ հարկավոր է վոչ թե ինքնանոս դեպքից դեպք ազիտացիա: Անհրաժեշտ է սխտեմատիկ ազիտացիայի

այնպիսի դրվածք, վորը կարգավորեր առարկայի յուրացման պրոցեսը: Դա հեշտ է անցկացնել գործարանում, ֆաբրիկայում, դժվար է սեզոնայիններին—կառուցողներին մեջ:

Յեւ միայն դիֆերենցիացիայի յենթարկված ազիտացիան կլուծի այս հարցը:

Անհրաժեշտ է հիշել,

«Վոր ինժեները կհանգի կոմունիզմի ճանաչմանը վոչ այնպես ինչպես ընդհատակյա պրոպագանդիստը, գրքակնամագետը, այլ իր գիտութեան տվյալների միջոցով. վոր գույզատնտեսը, անտառագետը և այլն ըստ իրենց կ'հանգեն կոմունիզմի ճանաչմանը, Լենինն («միասնական տնտ. պլանի մասին» հատ. XIII. 1 մաս):

Լենինի այս ցուցմունքը բանալի յե տալիս դրված հարցը հասկանալու համար:

Գործնականում ինչ է նշանակում ազիտացիոն—մասսայական աշխատանքի հետ մնալը: Յեթե այս վերածննդ ուղածը հիմնարկի ուզածը ցեխի լեզվով, ապա այդ կնշանակի, վոր հաճախ մենք չենք կարողանում իր ժամանակին բավարարել բանվորական մասսաների բարձր պահանջները, վորոնք զգալիորեն աճել են կուլտուրայի ու քաղաքականագիտ. պրոլետարական հեղափոխութեան տարիներում: Հետ մնալը նշանակում է նաև այն, վոր մեր վոչ բոլոր կազմակերպութեաններն են ընդունակ գլխավորել բանվորական մասսաների ակտիվութեանը հիմնարկներում: Այսպես, մոտիկ անցյալում Մոսկվայի կոմիտեն վորոշում հանեց Ձերժինսկու անվան («Կրամնայա Պրեսնյա») գործարանի մասին, վորտեղ անհրաժեշտ յեղավ ցրել ԲՂՂի Բյուրոն, գործարկումը և փոխել դիրեկտորին: Մարդիկ այդտեղ չեյին կարողացել գլխավորել մասսաների աճող ակտիվութեանը: Ստացվել էր հետամնացութեան. հետամնացութեանը հասցրել էր այն բանին, վոր գործարանը լուրջ ճեղքվածք ստացավ, այստեղից բխող բոլոր հետեւիքների հետ միասին: Բնորոշ է, վոր հենց գործարանում ազիտացիոն մասսայական աշխատանքը ցայտ ցայտ փայլում էր յրված:

Կարիք չկա խոսել այն մասին, վոր հետամնացութեանը կայանում է նայել կուսակցութեան լոզունգների կենսագործումը ֆաբրիկ գործարանի կյանքի գործնական հարցերի հետ ներդաշնակել չկարողանալու մեջ: Չե վոր յերբ մենք առաջադրում ենք վորեւ կուսակցական լոզունգ և նրա համար հիմնարկում վերացական ազիտացիա յենք անում չլկապելով այն հենց իր հիմնարկի կոնկրետ կյանքի հետ՝ անխուսափելի կտրվածութեան և առաջ գալիս:

Այս կապակցութեամբ էլ ազիտացիայական աշխատանքի խնդիրները անչափ մեծ են: Իսկ իրականում մենք ունենք աշխատանքի բացահայտ թերազնահատում:

Ռրինակ վերցնենք «կառուցուկ» գործարանը: Խոշոր ձեռնարկութեան և խամուկիչեակի ուայոնում:

Ահա թե ինչ է գրում այնտեղ ազիտացիոն—մասսայական աշխատանք տանող մի ընկեր, «Մենք դեռ մի շարքի առաջ չգիտեյինք, թե ինչու մե և կայանում մասսայական աշխատանքի սեկտորի աշխատանքը: Յեա իբրև այդ սեկտորի ղեկավար ավելի ուշադրութեան էյի դարձնում ակումբին, թերթին: Մի կողմ էր թողնված ազիտացիոն—մասսայական աշխատանքը. ինչպես հարկն է մասսայական սեկտորը դեր չի աշխատել: Բանվորական մասսան գործարանային կազմակերպութեան բոլոր միջոցառումներից հետո յե կանգնած»: Ահա խոշոր գործարաններից մեկի՝ ազիտացիոն—մասսայական գործնական աշխատակցի կոնկրետ բնույթագրերը: Կարելի յե բերել շատ էլի նմանորինակ փաստեր:

Վորոնք են այն հիմնական հարցերը, վոր պետք է առաջադրել այսօր ազիտացիոն—մասսայական աշխատանքը լավացնելու անհրաժեշտութեան հետ կապված:

Առաջին, ամենակարևոր, յեթե վոչ վճռական խնդիրը—դա կազմակերպչա—մասսայական աշխատանքը դիֆերենցիացիայի յենթարկելու անհրաժեշտութեանը և: Դա նշանակում է վոր տեղերում աշխատանքը պետք է տանել վոչ թե շարունակ, վոր մեր աշխատակիցները պետք է կարողանան հաշվի առնել տվյալ, կոնկրետ ձեռնարկութեան աշխատանքի պայմանները, ձեռնարկութեան բնույթը, աշխատանքի

պայմանները բանվորները կազմը (ծերեր նոր կազմեր, յերի-տասարդութուն, կանայք), կուլտուրական մակարդակը և այլն: Այս բոլորը անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ և կոնկրետ պայմաններին համապատասխան կառուցել ամբողջ կուսակցական և արհեստակցական աշխատանքը, մասնավորապես ագիտ-մասսայական աշխատանքը ձեռնարկությունում: Այսպիսի դիֆերենցիալ մոտեցման բացակայությունը — մեծ չարիք է, վորը պետք է վորքան հնարավոր է շուտ հաղթահարել և վերացնել:

Կոնկրետ որինակ: Մոսկվայում մոտ 300 հազար սեզո-նային բանվորներ են աշխատում: Չնայած կուսակցական բազմաթիվ վորոշումներին, վոչ վոք ինչպես հարկն է սեզոն-նիկների մեջ աշխատանք չի տանում: Սեզոննիկների մեջ աշխատանք տանելու քաղաքական նշանակության մասին դժվար թե կարիք լինի կրկնել:

Բոլոր կազմակերպությունները մշակում են կուսակցու-թյան XVI համագումարի վորոշումները: Այդ վորոշումները պետք է մշակվեն բոլոր ողակներում, մասնավորապես սե-զոննիկներին մեջ: Հետաքրքիր է մեջ բերել մի սեզոննիկի բնորոշ համակը, վորն աշխատում է Մոսկվայում: Զեկուցում լսել է նա, արդյոք XVI համագումարի մասին, թե չե, անհայտ է, այնուամենայնիվ այդ սեզոննիկը, ապրելով Մոսկվայում, քաղաքական կյանքի կենտրոնում, վորտեղ XVI համագումարի մասին հարցը քննվել է շատ ակտիվ, գրում է ծնողներին չափազանց հետաքրքիր նամակ: Մա-կենդանի մարդկային դոկումենտ է և այդպիսի դոկումենտ ները մեզ մոտ հավանական է քիչ չեն:

«27/VII—30 թ. Բարև ձեզ թանկագին ծնողներ, նամակը ձեր հայտնի վորդուցն է: Շտապում եմ տեղե կացնել ձեզ, վոր յես ներկայումս վողջ և առողջ եմ, դուք հիմա կկասկածեք, թե ինչու բոլորը յեկան, իսկ յես վոչ, դա յես հիմա ձեզ կհասկացնեմ—հայրիկ և մայրիկ, Մոսկվայում տեղի ունեցավ կուսակցության համառուսական համագումարը և քննեց հետագա կյանքի բոլոր հարցերը. կուսակցության XVI համագումարը վորոշեց անհրաժեշտաբար անցկացնել հարյուր տո-

կոսային կոլլեկտիվացումը և նրանց վորոշումները գրել են թերթում և յես ձեզ համար ուղարկել եմ թեր-թերը, վորի մեջ նկարագրվում է թե ինչ է վորոշել կուսակցական խորհրդակցությունը: Դուք կարողացեք և հասկացեք թե ինչ պետք է անել, տեսեք, չսխալվեք, թե չե յեթե պարտ մնաք, ապա ինչպես պետք է պար-տահատույց լինեք: Իսկ դուք, յեթե հիմա կարելի յե ձիու քուսակը լավ գնով ծախել, հարկավոր ե ծախել, համ ել գրեցեք ինչպես է կովը, ինչպիսին էք գնել, ծնել ե թե չե Յիթե ծնել է գրեցեք ինչ եք ուզում անել կովը, ում եք ուզում ծախել, կամ մորթել: Յես խորհուրդ եմ տալիս մորթեք:»

Ահա թե ինչպիսի դերը է ընդունում Մոսկվայում սե-զոննիկը կուսակցության XVI համագումարի վորոշումների նկատմամբ, նրանցից վոչինչ չը հասկանալով: Բայց այս դոկումենտը վկայում է այն մասին, թե ինչպես անթույ-լատելի թոյլ աշխատանք ենք տանում մենք սեզոննիկնե-րի մեջ: Վորքան այդպիսի նամակներ են գրվում, վոր-քան կովեր մորթոտվում, շնորհիվ նրան, վոր մենք չենք կարողանում շերտավորել աշխատանքը, բացատրել XVI հա-մագումարի վորոշումներն այնպես, վորպեզի սեզոնային բան-վորը յուրացնի և ճիշտ հասկանա այդ վորոշումները:

Հարկավոր է, ախր, մանածային ձեռնարկությունների բանվորների մեջ գործադրել մասսայական—ագիտացիոն աշխատանքի մի մեթոդ, տպագրիչների մեջ—ուրիշը, սի-զոննիկների մեջ՝ յերրոդը և այլն: Թե չե մեզ մոտ, իբրև ո-րենք—Շաբլոն է: Կարող ե՞նք արդյոք մենք ասել, վոր կուս. բջիջները և ֆարգործկոմները բավականաչափ ուշադրություն են դարձրել պրախտարների հին կադրերին գործարաններում և ֆարբիկներում: Վոչ, այդ ասել մենք չենք կարող: Մինչ—դեռ դա բանվորների մի այնպիսի միջնախավ է, վորը բացառիկ ուշադրություն է պահանջում դեպի իրեն:

Պետք է պարբերաբար հրավիրել «ծերերի» ժողովներ, նրանց առաջ դնել կարևորագույն խնդիրներ և հենվելով այդ հիմնական առանցքի վրա (բացառությամբ զՂուլ ելե-մենտների, վոր կան և այդ խավի մեջ), ծավալել արտադ-

րական մասսայական աշխատանքը: Բանվորների այդ կատեգորիայի ներգրավումը կուսակցութեան մեջ—մասսայական աշխատանքի կարևորագույն խնդիրն է: Առանձին ուշադրություն է պահանջում դեպի իրեն յերիտասարդութունը: Այստեղ են և իրենց դասակարգի մայրական գրկից չկտրված բանվորների յերախաները, յերիտասարդ ենտուզիտանները, վորոնք սակայն չեն անցել պայքարի դպրոցը, չեն սեն կվալիֆիկացիան: Մենակ ենտուզիտագրված բավական չէ: Այս խավի հետ պետք է համառ աշխատանք տանել, նրա կվալիֆիկացիան, քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար: Յեկել է յերիտասարդութունը գործարան և մանր բուրժուական ընտանիքից դուրս յեկած իր ունակութուններով ու տրամադրութուններով այդ յերիտասարդութունը պետք է դաստիարակել կամ ավելի ճիշտ վերադաստիարակել: Բանվորների մի մեծ մասն էլ յեկել է գյուղից: Բանվորների այդ խավի մասին մի անգամ չէ, վոր գրվել և խոսվել է: Խնդիրը կայանում է նրանում, վոր ադիտացիոն—մասսայական աշխատանքը դրվի այնպես, վոր նա ընդգրկի բանվորների յուրաքանչյուր խավը: Դրանում է կայանում աշխատանքի մեջ դիֆերենցիալ մոտեցման իմաստը:

Յերկորորդ — ագիտացիոն — մասսայական աշխատանքի մեր ղեկավարներից պահանջվում է, վորպեսզի նրանք հետ չմնան, քարշ չընկնեն պոչից, այլ գլխավորեն մասսաների նախաձեռնութունը: Գործնականում, հաճախ, այնպես և պատահում, վոր մեր աշխատակիցները ագիտացիայի և մասսայական-աշխատանքի գծով հետ են մնում բանվորների ակտիվութունից, քարշ են ընկնում պոչից չեն ուսումնասիրում, նոր առաջացած ծրիբը, չեն ընդհանրացնում աշխատանքի փորձը, նրա համար, արդյոք, վոր չեն կարողանում ինչպես հարկավորն է կարգի բերել աշխատանքը: Թե նրա համար, վոր չգիտեն, թե ինչով զբաղվեն, միայն թե փաստը մնում է փաստ: Կարելի չէ թվել ձեռնարկութունների մի ամբողջ շարք, վորտեղ հանդիպական արդիֆինսյալանն անցել է ագիտացիոն—մասսայական աշխատանքի կողմից:

Ագիտ-մասսայական աշխատանքի սեկտորների առաջ հսկայական խնդիր է դրված: Նրանց խնդիրն է—ուպերատիվ կերպով ղեկավարել ամբողջ ագիտ—մասսայական աշխատանքը ձեռնարկութունում, այդ գծով ստուգել ֆարգործկոմիտեների, կոպերատիվային բյուրոների և ֆարգործարանային մյուս կազմակերպութունների աշխատանքը, ղեկավարել և ուսումնասիրել հարվածայնութեան և սոցմրցութեան պրոբլեմը, ղեկավարել կամավոր ընկերութունների բոլոր բջիջները և այլն և այլն:

Յեթե բանվորական մասսաների կազմակերպումը արդֆինսյալանի պայքարի համար և հանդիպակած արդֆինսյալանը անցնում են այդ սեկտորների կողմից, ապա հարց է առաջանում. ինչի համար են նրանք և ինչով են ընդհանրապես նրանք զբաղվում: Ագիտ մասսայական աշխատանքի հետադոտումը մի շարք ձեռնարկութուններում ասում է այն մասին, վոր սեկտորները չգիտեն, նույնիսկ, թե ինչով պետք է նրանք զբաղվեն, վոր նրանց աշխատանքը վոչ վոք չի ղեկավարում: Ագիտ-մասսայական աշխատանքի վճռական խնդիրը ձեռնարկութուններում—դա պայքարն է արդֆինսյալանի համար, վորովհետև պայքարը արդֆինսյալանի համար դա պայքար է ինդուստրիալիզացիայի տեմպերի, հնգամյակը չորս տարում կատարելու համար:

Այդ հիմնական խնդիրն պետք է յենթարկել ամբողջ աշխատանքը: Արդֆինսյալանի համար միվոյ պայքարը առաջնակարգ տեղ է տալիս հարվածայնութեան պրոբլեմին: Հարվածային—դա այն հիմնական ողակն է, վորից պետք է բռնի ագիտ-մասսայական աշխատանքը, վորպեսզի խելացիորեն դուրս հանել ամբողջ շրթան և գործնականում լուծել կուսակցութեան կողմից առաջադրված տնտեսական և քաղաքական հարցերը:

Պետք է մատնանշել, վոր համարյա բոլոր ձեռնարկութուններում վորոշ չափով միակողմանի, բյուրոկրատորեն են բացատրում մասսաների համար արդֆինսյալանը կազմակերպելու խնդրի վրա:

— Հարցնում էս ինչու կարգի չի բերված կոպերացիայի վրա մասսայական բանվորական կոնտրոլի հարցը, ինչու

յն թուլացել ձեռնարկության շեֆային աշխատանքը խորհրդային ապարատում, ինչու վոչինչ չի արված փակ բաշխիչի հարցի գծով և այլն. և ստանում ես այսպիսի պատասխան. «մենք ժամանակ չունենք, մենք զբաղված ենք արդֆինսպլանի կատարման համար տարվող պայքարով»:

Այստեղ չեն հասկանում այն բանը, վոր գործարանի ճաշարանի, փակ բաշխիչի, հիմնարկության վրա շեֆության հարցերը—այս բոլորը պայքարի անհրաժեշտ նախադրյալներ են արդֆինսպլանը հաջող կատարելու համար: Կոնկրետ որինակով հաստատենք, թե որգանապես ինչպես և կապակցվում Խորհրդային ապարատը լավացնելու համար տարվող բանվորների պայքարը՝ արդֆինսպլանի կատարման հետ: Խոսում ենք ինչպես ինչպես կառուցվում է նոր, մեծ քիմիական գործարանի կառուցման թերությունները, ձեռնարկության գեկավարչական ամբողջ ախտիվի հայտնելով, նրանց լուծումը կախված է Վսեխիմպրոմի աշխատանքից: Կա այնպիսի մի կազմակերպություն, վորի ապարատն իր աշխատանքում ունի մեծ չափով ուղղաօրենիք: Այսպիսի հայտարարությունից հետո միտք և առաջանում այն մասին, թե ո՞վ է շեֆություն անում Վսեխիմպրոմի վրա: Դուրս և գալիս, վոր Վսեխիմպրոմի վրա շեֆություն է վերցրել հենց այդ ֆիմիական գործարանը: Գործարանային կազմակերպությունները այդ ուղղությամբ վոչինչ չեն արել:

Իսկ յեթե շեֆությունը զրվեր, ինչպես հարկավորն է, յեթե Վսեխիմպրոմ ուղարկելին 10-20 բանվորներ, վորոնք ժամանակին բաց անելին այդ ուղղաօրենիքի արժանները, անկասկած, վոր շատ թյուրիմացություններ, վոր տեղի ունեն այժմ գործարանի կառուցման մեջ, կարող էին և չըլինել: Իսկ չեն կատարել շեֆության մասին գիրեկադիները, հավանական է նրա համար, վոր զբաղված են յեղել... արդֆինսպլանի համար տարվող պայքարով: Այստեղից ել յեզրակացություն. Իտրոգովիլովսկու ֆիմիական գործարանի արդֆինսպլանի համար տարվող պայքար՝ կապվում է Վսեխիմպրոմի ուղղաօրենիքի համար ապարատի վրա գործարանի շեֆուրյան ուժեղացման անհրաժեշտության կոնկրետ հարցերի

հետ: Նման որինակ կարելի չէ բերել և կոոպերացիայից: Չե վոր գործարանային ճաշարանները շատ վատ են զբաղված, և այդ հանգամանքը չի կարելի վոչ մի կերպ բացատրել որեկտրիվ պատճառներով:

Ճաշարանում կեղտոտ է, անկարգություն, բայց և այս բոլորը բոլորովին որչեկտրիվ դժվարություններ կատեգորիային չեն պատկանում: Գործարանային ճաշարանի վատ կազմակերպումը հասցնում է այն բանին, վոր շատ բանվորներ 5—10 բուլե առաջ, մինչև աշխատանքի վերջանալը շտապում են ճաշարանում հերթ բռնելու: Հաշվեցեք և գումարեցեք այդ բոլոր բուլեները և ձեզ համար պարզ կլինի, վոր լավ Ֆաբրիկա գործարանային ետարանի համար տարվող պայքարը բնութագրում է հարցի որգանական մասն է հանվում: Իսկ մասերների լավ կազմակերպման համար տարվող պայքարը մի թե նույնպես պայքար չէ արդֆինսպլանի կատարման համար:

Ահա թե ինչու ձեռնարկություններում գործնական աշխատանքի մեջ պետք է կարողանալ արդֆինսպլանի կատարման և զերակատարման համար տարվող պայքարը կապել ազիտամասայական և կազմակերպչական ամբողջ աշխատանքի հետ: Մենք մատնանշեցինք, վոր հարվածայինը—դա հիմնական ողակն է: Հարվածայինը—դա առաջավոր պրոլետարն է: Վորպեսզի մենք շատ այդպիսի առաջավոր բանվորներ ունենանք, պետք է նշանակալից չափով ուժեղացնենք ազիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքը: Ահա թե ինչու արդֆինսպլանի համար մղվող պայքարը չի կարելի առանձնացնել և ձեռնարկությունում լավ կազմակերպված ֆաբրիկայից, լավ կազմակերպված Ֆաբգործուսից, լավ կազմակերպված միսիկոնտրից:

Խոսակցություններն այն մասին, թե մենք ժամանակ չունենք այս ու այնինչ հարցերով զբաղվելու, վորովհետև այդ բոլորին, խանգարում է արդֆինսպլանը,—դա արդունք է նրան, վոր չեն հասկանում, չեն կարողանում արդֆինսպլանի համար մղվող պայքարը կապել ձեռնարկությունում տարվող քաղաքական, մասսայական աշխատանքի ամբողջ սխառեմի հետ:

Այս անհուշութեամբ անողուտ չի լինի նշել ֆարգործարանային բոլոր կազմակերպութեաններին աշխատանքի բաժանման հարցի մասին: Կան ազիտմասսայական սեկտորներին վարիչներ, վորոնք հիանալի աշխատում են, բայց վորոնք ուզում են ամեն ինչ խեղճ անել: Բայց խնդիրը բոլորովին նրանում չէ, վոր ազիտ-մասսայական սեկտորին աշխատակիցը բոլորը ինքն անի. խնդիրը կայանում է նրանում, վոր նա կարողանա կազմակերպել և ստիպել աշխատելու ֆարգործարանային բոլոր կազմակերպութեաններին ազիտ-մասսայական աշխատանքի բնագավառում:

Այսպես, որինակ, «Սերպ և Մորոտ» գործարանում աշխատանքը հետազոտող ընկերը արձանագրել է ազիտմասսայական սեկտորի ուղեբաժնի աշխատանքի մեջ մեծ քանակութեամբ անձնավորութեաններ ներգրավելու վախը: «Ո՞վ է իմանում, կարգարացնի նա իրեն աշխատանքի մեջ, թե չէ, հանձնարարում ես, չի կատարում, կամ վատ է կատարում: Մտիպված ես լինում անել ինքը», ասում է ազիտ-մասսայական սեկտորի վարիչը: Յե՛վ բնական է, վոր գործի աշխատիչները չբոլորեցան, աշխատանքի շարունակ արագացող տեմպերի պայմաններում, ազիտ-մասսայական սեկտորի վարիչը է վիճակի չի լինում կատարել մասսայական աշխատանքի իրեն առաջադրվող բազմակողմանի խնդիրները:

Ի հարկե շատ լավ է ամբողջ ուժերով աշխատանքին նվիրվելը, բայց դա վաս կազմակերպչի լավ վարակն է: Խնդիրը նրանում չէ, վոր ազիտմասսայական սեկտորի վրա դրվի բոլոր խնդիրների կիրառումը, այլ նրանում, վոր լավ աշխատի յե՛վ կողմերասիվային բյուրոն. յե՛վ ֆարգործարանային կողմերին, վորպեսզի ազիտմասսայական աշխատանք տարվի կանանց մեջ և այլն: Յեթե մասսայական ազիտացիոն սեկտորը բոլորն ինքն անի, գրանցից վոչինչ գուրա չի գա: Պետք է գործը կազմակերպել այնպես, վորպեսզի ստիպել աշխատելու ֆարգործարանային կազմակերպութեաններին բոլոր ողակներին, իսկ իրենք պետք է ղեկավարեն, հակեն և ստուգեն, թե ինչպես են կատարվում խնդիրները:

Նկատվում են և աշխատիչի փաստեր, յերբ մասսայական ազիտացիոն աշխատանքի սեկտորը կատարում է այն աշխատանքը, վորը իրեն չի վերաբերում և ընդհակառակը, չի զբաղվում այն աշխատանքով, վորով նա պետք է զբաղվի. աշխատանքի մեջ կազմակերպված ձեռնուղեղուն ղեկ չկա:

Հետևյալ հարցը—դա աշխատանքի փորձը փոխանակելու անհրաժեշտութեան հարցն է: Անկասկած մի շարք ձեռնարկութեաններ ազիտացիոն-մասսայական աշխատանքի բնագավառում ունեն նվաճումներ, բայց նրանց մասին վոչ վոք չգիտի: Այստեղ հավաքվածներից վոչ վոք չի կարող ասել թե ինչ գիտե նա այս կամ այն գործարանի նվաճումների մասին: Իե՛ն ավելին. յեթե, նույնիսկ, իմանում են այս կամ այն գործարանի փորձի մասին, համարյա վոչինչ չեն անում, վորպեսզի ոգտագործեն այդ փորձը իրենց ձեռնարկութեանում: Որինակի ուժը—դա հսկայական ուժ է: Լե-նինն—ասել ես,—թե «Որինակի ուժը, վորը չի կարողացել իրեն հայտնաբերել կապիտալիստական հասարակութեանում, հակայական նշանակութեան է ստանում այն հասարակութեանում, վորտեղ վերացվում է մասնավոր սեփականութեանը հողի և գործարանների վրա»:

Որինակի ուժին Լենինը բացառիկ նշանակութեան էր տալիս: Բերենք մի քանի մեջբերումներ այդ մասին:

«Ի՞նչն է իսկապես պակասում մեզ մոտ—դա լավագույն որինակները լայն ոգտագործելու կարողութեանն է, այդպիսիները շատ չեն մեզ մոտ, վորպեսզի նրանց դարձնենք բոլորի համար պարտադիր» (հատ. XVIII, մաս I եջ 284):

«Սոցիալիստական մրցութեան հարցի առթիվ» հոդվածում Լենինը գրում է.

«Արտադրութեան կազմակերպման լավագույն որինակը ուղեկցվելու յն աշխատանքի անխուսափելի թեթեւացումով և սպառման գումարի ավելացումով նրանց համար, ովքեր կատարել են այդ լավագույն կազմակերպումը»:

Բերեմ ելի յերկու մեջբերումներ.

«Թող, վոր մենք ունենանք հարյուր հազարավոր և միլիոնավոր որինակներով տարածված մամուլ, վորը ծանոթացնի մեր ամբողջ բնակչությանը պետութեան այն վոչ շատ, մյուսներից առաջավոր աշխատանքային կոմունաների գործի որինակելի դրվածքի հետ» («խոր. մամուլի հերթական խնդիրները»):

«Յուրաքանչյուր ձեռնարկութեան, տնտեսական շինարարութեան հետ կապված հիմնարկութեան պարտադիր նրկարագրութեանը, նրանց, վորոնք արժանի յեն որինակելիութեան կոչմանը, վորոնք աչքի յեն ընկնում, կամ հաջող են աշխատում (յեթե չկան վոչ որինակելիները և վոչ ել աչքի ընկնողները): Այդպիսի հիմնարկութեանների վարչութեան կամզը (անունները): Նրա աշխատանքի ձևերը: Արդյունքները, բանվորների և բնակչութեան հարաբերութեանը» (հ. XIII մաս 1, էջ 249):

Մեր ագիտ-մասսայական աշխատանքի պրակտիկայում բոլորովին հաշվի չեն առնվում Լենինի այս կարևորագույն ցուցմունքները: Մեզ մոտ նույնիսկ լավ որինակի մասին, հաջողութեան մասին, յերբեմն, չգիտեն, նույնիսկ միևնույն ձեռնարկութեան ներսում: «Կառուցուկ» գործարանի ագիտ-մասսայական աշխատանքի դրվածքը հետազոտելիս, հետազոտողը հանդիպել է այդ մասին հետաքրքիր մի փաստի:

Բանվոր Ալեքսեյեֆը ասում է. «Գործարանում ագիտ-մասսայական աշխատանքը չենք զգում: Բանվորը չգիտե նույնիսկ, ինչ պետք է անի հարվածայինը, վորովհետև ցեխում վոչ մի մասսայական աշխատանք չի տարվում: Չգիտենք թե ինչ նվաճումներ ունեն մեր գործարանի առանձին բրիգադները»: Այս որինակը բավական վառ կերպով խոսում է այն մասին, թե ինչպես մենք չենք կարողանում աշխատել, չենք կարողանում ցույց տալ լավը, և ընդհակառակը շատ թույլ ենք կարողանում վոչնչացնել վատը, իսկ վոչնչացնել վատը նույնպես ագիտ-մասսայական սեկտորի խնդիրն է:

Որինակի ուժը—դա կարող զենք է ագիտ-մասսայական ապարատի ձեռքում: Մենք չենք կարողանում, նույնպես, կազմակերպչորեն ամրացնել հաջողութեանները: Մենք ու-

նենք մի ամբողջ շարք հաջողութեաններ հարվածայինութեան և սոցմրցման շարժման մեջ: Ամեն մի հաջողութեան պահանջում է, վորպեսզի նա ամրանա կազմակերպչորեն, իսկ մեզ մոտ հաճախ ձեղքվածք է առաջանում մասսաների շարժման յեղ նրանց կազմակերպության միջով, ակտիվության անվան յեղ նրա ամրացման միջով: Այս կարելի չէ ցույց տալ և հանդիպակած արդժինպանի որինակի վրա: Հանդիպակած արդժինպանը բանվորական մասսաների ակտիվութեան նոր արև է բարձրացրել: Իսկ ինչպես են վերաբերվում դրան, վորոշ տնտեսավարներ և խորհրդային ու տնտեսական ապարատը: Ընդառաջում է արդյո՞ք տնտեսական ապարատը այդ ակտիվութեանը: Փորձը ցույց է տվել, վոր բանվորական մասսաների ակտիվութեանը դեմ է առնում տնտեսական ապարատի անձկունութեանը, նրա վերակառուցվելու և այդ ակտիվութեան հանդիպակած արևը կազմակերպելու նվազ ընդունակութեանը:

Կազմակերպչորեն ամրացնել հաջողութեանը—դա նշանակում է հասնել այնպիսի գրութեան, յերբ հարվածային բրիգադները չեն քայքայվում, այլ քանակապես և վորակապես աճում են: Իսկ նշանակում է, վոր հարվածային բրիգադի կոնկրետ նվաճումները, դառնում են ամբողջ գործարանի սեփականութեան, վոր հարվածայինները քայլ առաջ են անում, մտնելով կուսակցութեան շարքերը և այլն:

Ագիտ-մասսայական աշխատանքը, ի դեպ, չպետք է կորցնի կուսակցութեան բջի աճման հեռանկարը: Առանձին ուշադրութեան պետք է դարձնել աշխատավորուհիների մեջ աշխատանքի նշանակալի թուլացման փաստի վրա: Այդ թուլացումը տեղի չէ ունեցել բանվորուհիների և գեղջկուհիների բաժինների վերացումից հետո: Իայց վերացնելով այդ կազմակերպչութեանները, կուսակցութեանը դրել է կին աշխատավորական մասսաների մեջ աշխատանքի ուժեղացման և վոչ թե թուլացման խնդիրը: Աշխատանքի այդ բնագավառում անհրաժեշտ է վճռական բեկում: Թերազնահատել աշխատանքի այդ տեղամասը—դա նշանակում է թույլ տալ կոպիտ սխալ: Բազմիցս կուսակցական վորոշումները աշխատանքի ծանրութեան կենտրոնը ցեխ, բրիգադ, ագրեգատ

տեղափոխելու խնդիրն են դրել: Այդ գերեկտիվը ագիտ-
մասսայական աշխատանքի նկատմամբ ել շատ թույլ և կա-
տարվում: Ինչ վերաբերվում է կառուցվածքային հարցերին
—բոլոր ձեռնարկություններին միևնույն սխեման յերաշ-
խավորել չի կարելի: Ձեռնարկության ծավալի և բնույթի
հետ կապված ել պետք է լուծել կառուցվածքային կարգի
հարցերը: ԲՂԻ բյուրոն մյուս սեկտորների շարքում կազ-
մակերպում է և ագիտ-մասսայական աշխատանքի սեկտոր,
ըստ վորում ցանկալի յե, վորպեսզի այդ սեկտորը գլխա-
վորի բՂԻ բյուրոյի անդամը: Այդ սեկտորն ունի մի շարք
տեղամասեր: Բոլոր ձեռնարկությունների համար մենք պար-
տադիր ենք համարում յերկու տեղամաս. աշխատավորների
մեջ մասսայական ագիտացման սեղանա (պատգամավորա-
կան ժողովներ) և խմբակային ագիտացիայի սեղանա: Մյուս
տեղամասերն ստեղծվում են համապատասխան ձեռնար-
կության աշխատանքի բնույթի: Միտք չունի այնպիսի տե-
ղամասեր ստեղծելը, վորոնք փոխարինելին դերեկտորի,
Ֆարգործկոմի, կոոպերատիվային բյուրոյի աշխատանքնե-
րին: (Մի շարք ձեռնարկություններում, որինակ կազմա-
կերպվել են արտագրական տեղամաս, կոոպերատիվային տե-
ղամաս և այլն): Ագիտ-մասսայական սեկտորի խնդիրն է—
ղեկավարել, հսկել, բայց վոչ թե փոխադրել ֆարգործարա-
նային կազմակերպությունների բոլոր ողակներին՝ ագիտ-
մասսայական աշխատանքի բնագավառում: Սեկտորը իր աշ-
խատանքի շուրջը պետք է կազմակերպի ակտիվ: Ավելի ար-
դարացրել է իրեն աշխատանքի բրիգադային մեթոդը: Տե-
ղամասերի շատ ծանրաբեռնումը բացասական արդյունքներ
է տալիս: Ինչ վերաբերում է ցեխին—այստեղ ել անհրա-
ժեշտ է ագիտ-մասսայական աշխատանքի կազմակերպիչ
ուսենալը: Մեծ ցեխերում ողտակար է (այնտեղ, վորտեղ
այդ անհրաժեշտ է) նույնպես ուսենալ բանվորուհիներին մեջ
աշխատանքի և խմբակային ագիտացիայի տեղամասեր: Տե-
խային կազմակերպիչը ոպերատիվ աշխատանք է տանում
խմբակազմակերպիչների միջոցով, նրա շուրջը կազմակերպ-
ված ակտիվի միջոցով: Յանկալի յե նույնպես, վորպեսզի
ցեխային կազմակերպիչը ցեխային բՂԻ անդամը լինի:

Ինչ վերաբերում է ագիտ-մասսայական աշխատանքի
սեկտորի փոխարարերությանը մյուս սեկտորների հետ—
մասնավորապես ակումբի և պատի թերթի հարցերի նկատ-
մամբ—այստեղ բոլորովին անթույլատրելի յե վորեկիցե
«վարչական» կոմի: ԲՂԻ բյուրոյի ղեկավարությամբ աշ-
խատող բոլոր սեկտորները պետք է ուսենան գործողության
միասնություն: Տեթե, մի կողմից, ագիտ-մասսայական սեկ-
տորը չի ղեկավարում ակումբային աշխատանքը, ապա
մյուս կողմից ել, նա չի կարող մասսայական ագիտացիոն
աշխատանք ծավալել, չհենվելով և չողտագործելով ակում-
բը: Նույնը պետք է ասել և գործարանային թերթի վերա-
բերմամբ, առանց վորի չի կարելի պատկերացնել իսկական
ագիտ-մասսայական աշխատանքը (մի շարք ձեռնարկներում
այդ թերթը գտնվում է ագիտ-մասսայական սեկտորի ան-
միջական ղեկավարության ներքո): Այս կարգի հարցերը շո-
շափելիս անհրաժեշտ է հիշել Լենինի հետևյալ նկատողու-
թյունները, «Ավելի բազմազանություն գործնական փորձի
մեջ, ավելի ուսումնասիրել նրան»: Այսպիսին են հիմնական
ղեկավարող ցուցմունքները: Անհրաժեշտ է մոտակա ժա-
մանակներս ձեռնարկություններում վճռական շրջադարձ
կազմակերպել ագիտ-մասսայական սեկտորների աշխատանքի
մեջ: Կուսուսակոմները պետք է նշանակալի չափով ուժեղաց-
նեն իրենց ղեկավարությունը սեկտորների աշխատանքի
վերաբերմամբ: Հարկավոր է աշխատանքի փորձի լայն փո-
խանակում: Մի շարք ձեռնարկներում անհրաժեշտ է որի-
նակելի աշխատանքը կազմակերպել այն հաշվով, վորպեսզի
այդ ձեռնարկությունների աշխատանքի փորձի վրա սովորեն
մյուսները: Ձեռնարկություններում ագիտ-մասսայական
աշխատանքի թուլությունը արդյունք է նրան, վոր թերա-
գնահատվում է ագիտացիայի և մասսայական աշխատանքի
դերն ու նշանակությունը մասսաները սոցիալիստական շի-
նարարության համար մղվող պայքարում կազմակերպելու
գործում: Այդ թերազնահատմանը պետք է ջանջախիչ հար-
ված հասցնել:

Մեր ցերկըրում սոցիալիստական շինարարութեան ժամանակակից ետապը՝ որակարգում դրել է բոլոր կազմակերպութիւններին աշխատանքի արմատական վերակառուցման հարցը: Վերակառուցվելով—դա նշանակում է այնպես կազմակերպել աշխատանքը, վոր նա հետ չմնա սոցիալիստական շինարարութեան սեմպերից, վոր նա պատասխանի այն բարձր պահանջներին, վորոնց առաջադրում է մեզ սոցիալիստական վերակառուցման քաղաքը: Վերակառուցում—դա նշանակում է, հետ չմնալ լայն բանվորական մասսաների քաղաքական ակտիվութեան աճումից, գլխավորել այդ ակտիվութիւնը և դնել նրան ծավալուն սոցիալիստական հարձակման, ԽՍՀՄ. ինդուստրիալիզացիայի և կոլլեկտիվացման հունի մեջ: Վերակառուցվել—դա նշանակում է, նաև, կարողանալ մտքի-լիզացիայի յենթարկել պրոլետարական հասարակայնութիւնը դժվարութիւններին դեմ պայքարելու, բյուրոկրատական աղավաղումների, քարացածութեան, հնամուլութեան, որոմով շինայի դեմ պայքարելու համար:

Բոլոր կազմակերպութիւններն արդո՞ք, կարողանում են բոլոր շնորհներն վերակառուցել իրենց աշխատանքը, և մեզ մոտ աշխատանքի բոլոր տեղամասերում են, արդո՞ք, իշխում բոլոր շնորհներն տեմպերը: Ի՞ժպար է դրան դրականորեն պատասխանելը, յեթե մենք վերցնենք մեր աշխատանքի ախպիսի մի բնագավառ, ինչպիսինն է ագիտացիան:

Ագիտացիայի դերի մասին, դասակարգի ձեռքին իբրև կարող գենք, դժվար թե կարիք լինի ապացուցելու նույնպես, վոր սոցիալիզմի համար մղվող մեր պայքարի հաջողութիւնները պահանջում են մարտական ուղեւորի ագիտացիայի կազմակերպում: Չափազանցութիւն չի լինի, յեթե մենք ասենք, վոր մեր ագիտացիան վերջին տարիներս վորոշ չափով հետ է մնում սոցիալիստական շինարարութեան սեմպերից:

Այնպիսի գենք, ինչպիսինն է ագիտացիան, մենք բավարար չափով չենք տիրապետում: Մենք չենք կարողանում ինչպես հարկն է ոգտագործել այն հակայական հնարավոր-

րութիւնները, վոր ունենք, վորպեսզի ագիտացիան ինչպես հարկավոր է սպասարկի սոցիալիստական շինարարութեանը:

Կապիտալիստական հասարակութիւնում իշխող ագիտացիայի համեմատութեամբ մեր ագիտացիայի սկզբունքային առավելութեան մասին մի անգամ չե վոր խոսել և լինինը: Կեղծիքն ու խաբեբայութիւնը տիրում է կապիտալիզմի լագերում, ագիտացիայի ճշմարտութիւնը տիրում է այնտեղ, վորտեղ իշխանութեան գոլըս է կանգնած պրոլետարիատը:

«Կապիտալիստական հասարակութիւնում աշխատավորների տնտեսական կյանքի գլխավոր հարցերը, նրանց սոված կամ լավ գոյութեան դրութիւնը վորոշում է կապիտալիստը, իբրև տեր, իբրև աստված: Բոլոր կապիտալիստական յերկրներում, դեմոկրատական հանրապետութիւններում ժողովրդի ուշադրութիւնը աղպիսի շրջաններում գրավվում է այն վարձու բուրժուական մամուլի կողմից, վորը կոչվում է խոսքն ազատութիւն, վորը հորինում է գործադրում է ամբի ինչ, վորպեսզի խաբի ու մոլորեցնի այդ մասսան» (Լենինի Համ. Կ. (բ) Կ IX համ. ճառից):

Մեր ագիտացիայի վերաբերյալ Լինինն ասել է.

«Ագիտացիայի պարզութիւնը, հիմնական պայման է: Յեթե մեր թշնամիները խոսել ու խոստովանել են, վոր մենք ագիտացիայի դարգացման գործում հրաշքներ ենք արել, ապա այդ պետք է հասկանալ վոր թե արտաքին ձևով, վոր մենք ունինք շատ ագիտատորներ և շատ թուղթ ենք ծախսել, այլ այդ պետք է հասկանալ ներքին ձևով, վոր այն ճշմարտութիւնը, վոր ունեցել է այդ ագիտացիան, թափանցել է բոլորի գլուխները: Յեվ այդ ճշմարտութիւնից շեղվել չի կարելի»:

Ագիտացիայի նմարարութիւնն ու պարզութիւնը—անա այն առավելութիւնը, վոր ունի մեր կուսակցութիւնը, իբրև բանվոր դասակարգի ավանգարդ կուսակցութիւն, վորը գլխավորում է սոցիալիստական շինարարութեանը:

Ազիտացիայի ճշմարտութիւնն կարող է ունենալ բարձրացող դասակարգը, դասակարգը վորին պատկանում է ապական:

Բուրժուազիան ստիպված է ստել, վնասել ստի նուրբ ձևեր, վորովհետև նա հարստահարում ճշուժում է, մասսաները: Նա ունի այնպիսի ազիտպրոպ, ինչպիսինն է սոցիալ-դեմոկրատիան, վորը հոգուտ խմբերիալիզմի ապականում է բանվորների միտքը:

Մեր ազիտացիան կոմունիզմի համար մղվող մեր պայքարի տվյալ ետապում իր առաջ խնդիր է դնում՝ մոքիլի-զացիայի յեկրարիկ պրոլետարական ուժերը, ինչպես միջազգային հեղափոխության համար արվող պայքարի վերաբերմամբ, այնպես յեկ պրոլետարական դիկտատուրայի ամրացման ու եՄՆ Միութիւնում—համախարհային կոմունիզմի այդ ամուր բազայում, սոցիալիզմի հաջող շինարարության վերաբերմամբ կուսակցության նշանաբանների իրականացման համար մղվող պայքարում:

Յեթե կարելի յի խոսել մեր ազիտացիայի և ազիտացիոն ապարատի սոցիալիստական շինարարութեան տեմպերից և բանվորական մասսաների քաղաքական ակտիվութեան աճումից վորոշ չափով հետ մնալու մասին, ապա վոշ այնքան քանակական, վորքան ազիտացիոն աշխատանքի կազմակերպման հարցերի վերաբերմամբ:

Նոր պայմանները պահանջում են և աշխատանքի նոր կազմակերպութիւն: Ինչո՞ւնն է կայանում, իրող հետ մնալը: Մենք միշտ չե, վոր խելացի կերպով ոգտագործում ենք մեր ազդեցութեան բոլոր լծակները մասսաների վրա:

Վերջենք, որինակ, կինոն—մասսայական ազիտացիայի այդ կարող գեները: Այստեղ հետ մնալն ակնհայտ է, ինչպես քանակական այնպես և մանավանդ վորակական տեսակետից: Ժամանակն է արդեն խորհրդային կինոյից դեպ յովաճումներ պահանջելը:

Այստեղ առ այժմ իշխում է քարացածութիւնը, հնամուրութիւնն ու որլումովչինան: Բոլշևիկական տեմպերը բացակայում են: Ազիտացիայի ճշմարտութիւնը հաճախ փոխարինվում է կինո աչքակապութեամբ, յեթե չասենք, վոր

կինո սրիկայութեամբ: Իհարկէ սխալ կլինեք մեր խորհրդային կինոյի աշխատանքի մութ ֆոնի վրա լուսավոր բծերը չնկատելը: Այնուամենայնիվ պետք է մասնանշել, վոր կինոյի բնագալաում հետ մնալը ձեղքում է մեր բոլշևիկյան ազիտացիայի ֆրոնտը:

Վորոշ չափով ջանք է թափում և ուղղում է իր գործերը մեր ուղիոն: Մեծ հաջողութիւններ է ունեցել վերջին տարիներս մեր մեծ ուղիը: Սակայն լավորակ մասսայական մատչելի գրականութեան բացակայութիւնը թուլացնում է ազիտացիայի ֆրոնտը: Շուկան լցվում է ցածր վորակի արտադրանքով: Գրում են միայն գրելու համար: Ճտուք են ասում, միեւնոյն հարցը բացատրում ամեն մեկն իր հասկացածի պես և հաճախ միայն ըփորում մասսայական ընթերցողին: Բայց չե վոր ըստ Լենինի «ազիտացիայի պարզութիւնը—հիմնական պայման է»:

Մեր հետ մնալը կայանում է նրանում, վոր մենք չենք կարողանում, ինչպիսի հարկավոր է, մասսաներին ցույց տալ մեր նվաճումները: Ցույց տալ վոշ թե հատուկտոր, այլ ցույց տալ այնպես, վոր իսկապես կենտրոնացվի միլիոնների ուշադրութիւնը: Բուրժուազիան հաճախ ավելի լավ և վարպետորեն է քարողում կեղծիքն ու խաբեբայութեանը, քան թե մենք՝ մեր ճշմարտութիւնը: Լենինը մի անգամ չե վոր այդ համեմատութիւնը բերելով, նշել է մեր հետ մնալը:

Մենք վոշ միշտ և ժամանակին կարողանում ենք պատասխանել մասսաների պահանջներին: Մեր ազիտացիոն ապարատը դեռ բավական ձկուն ու արագաշարժ չե: Նա, այդ ազիտացիոն ապարատը, միշտ չե վոր սիրով սպասարկում է աշխատանքի դժվարին տեղամասերին: Պակասում է նախաձեռնութիւնը, շարունը, նվազագույն դիմադրութեան գիծը աշխատանքի մեջ—այս բոլորը բնորոշ են մեր վերջին շրջանի ազիտացիային: Բայց չե վոր ազիտացիայի ղեկին պետք է վարպետորեն տիրապետել: Ազիտացիայի նետերը պետք է հարվածեն դասակարգային թշնամուն ավելի առաջ, քան թե նա կկարողանա իր ազդեցութիւնը տարածել շրջանում:

Չապատի վրա: Դասակարգային թշնամին ճարպիկ է, նա բանաձևեր չի գրում «վերակառուցման» մասին, «ձևերի և մեթոդների» մասին, Բայց նա գործնականում շատ վարպետորեն, մանավանդ գյուղում ազիսացիա յե անում ոգտագործելով մեր շինարարության դժվարությունները: Կուլակային ազիտպրոպը, հաճախ, իր գործը կատարում է լսարանում, վորը ուղղակի անուշադրություն է մատնվում մեր ազիտացիայի մեխանիզմի կողմից: Բավական է միայն ըստուգել, թե ինչպես ենք տանում մասսայական ազիտացիոն աշխատանքը մենք հարյուր հազարավոր կառուցողների մեջ, վորպեսզի համոզվենք վոր այդ դրությունը ճիշտ է:

Սեզոնային բանվորները շատ սիրով են գնում մասսայական ժողովներին, մանավանդ յեթե զեկուցումներով հանդես են գալիս կառավարության անդամները և զեկավար կուսակցական աշխատողները: Բայց այդպիսի ժողովներ շատ սակավ են գումարվում: Այդ ժողովների կազմակերպումը այնքան վատ է դրված, վոր կուլակային ելեմենտները (այդպիսի ելեմենտներ պատահում են կառուցող բանվորների մեջ) հաճախ տապալում են ժողովները, գործադրելով բոլոր միջոցները («հրդեհ», բացականչելով, թաղման ծեսեր ցուցադրելով և այլն):

Կամ թե վերցնենք մասսայական ազիտացիայի համար գործունեությունային այնպիսի մի ասպարիզ, ինչպիսինն է Մոսկվայում կուլտուրայի և հանգստի պարկը, վորտեղ որս կան 30-ից մինչև 50 հազար աշխատավորներ են լինում, մանավանդ յերիտասարդներ: Անա թե վորտեղ կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների ազիտացիոն ապարատը կարող եր իր ուժերը դնել և հսկայական չափերով ծավալել աշխատանքը: Կուլտուրայի և հանգստի պարկը անկասկած ունի նվաճումներ: Սակայն ինչպես են զեկավարում նրա աշխատանքը կուսակցական կազմակերպությունները, ինչ մասնակցություն են ունենում նրա աշխատանքում արհմություններն ու կոմյերիտմիությունը: Ինչ են անում այդ բոլոր կազմակերպությունների ազիտացիոն ապարատները: Համարյա թե վսչինչ: Այստեղից ել՝ անխուսափելի ինքնահոսը ազիտացիոն աշխատանքի մեջ,

դիֆերենցիալ մոտեցման բացակայությունը տարբեր խավերի նկատմամբ,

Այստեղից ել՝ քիչ չեն այն թերությունները, վորոնք կապված են կուսակցական զեկավարություն և պարկի աշխատանքի մեջ արհմիությունների ու կոմյերիտմիության ակտիվ մասնակցություն համարյա լիովին բացակայություն հետ:

Բայց չե վոր կուլտուրայի պարկով անցնում են միլիոնավոր աշխատավորներ: Ինչով կարելի յե բացատրել այսպիսի անտարբերությունը յեթե վոչ նրանով, վոր մեր ազիտացիոն ապարատը հետ է մնում մասսաների ակտիվությունային աճումից, բավականաչափ ընդունակ չե ոպերատիվ գործել այնտեղ, վորտեղ միլիոններն են:

Բայց չե վոր հարկավոր է, իրոք, մարտական, ոպերատիվ ազիտացիա, վորը հետ չի մնում կյանքից, ժամանակին պատասխանում է պահանջներին, վորը կազմակերպում է մասսաներին սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերի համար պայքարելու: Կարողանում է արդյոք մեր ազիտացիոն ապարատը լուծել այդ կարևորագույն քաղաքական խնդիրը: Շատ թույլ: Վերցնենք թեկուզ հենց մե. տինգների կազմակերպումը ձեռնարկություններում, վորտեղ կառավարության անդամները, զեկավար կուսակցական և արհեստակցական աշխատակիցները զեկուցումներ են անում ընթացիկ մոմենտի մասին: Ազիտ-մասսայական աշխատանքի այս ձևը շատ դրական ձև է: Սակայն այդ մետինգների կազմակերպումը հաճախ շատ վատ է լինում: Պետք է ասել, վոր կա աշխատակիցների մի կատեգորիա, վորը սիրով չի գնում ձեռնարկություններում զեկուցելու: Այդպիսի քամարուրյուններ կարելի յե վարկավարել միայն, իբրիվ բանվորական մասսաներից բյուրոկրատսարա կսրված լինելուն:

Մեր աշխատանքի պրակտիկայում տեղի ունեն և այնպիսի զեպքեր, յերբ զեկուցումներին ուշանում են, ստիպում են նրանց ամբողջ ժամ գուցե և ավելի սպասել, կամ ուղղակի տապալում են ժողովը: Չե վոր դա այնպիսի խայտառակություն է, վորի դեմ անհրաժեշտ է վճռականորեն պայ-

քարել: Մյուս կողմից ել բլիճների և ֆարգործկոմների ղեկավարները ձևական վերաբերմունք են հայտնաբերում ղեպի այդպիսի կարևորագույն ժողովների հրավիրումը, թերագնահատում են նրանց քաղաքական նշանակությունը: Յերբ կառավարությունն անդամները և ղեկավար կուսաշխատողները հաշիվ են տալիս ձեռնարկություններում, ղեկուցումներ են անում ընթացիկ մոմենտի մասին, — այդ որը պետք է մարտական որ լինի ձեռնարկությունում:

Պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն կուսակցական և կոմյունիստական բլիճները, պետք է այնպես կազմակերպվի ժողովը, վոր ի վերջո կարողանա հաջողություն բուծել զրված խնդիրը: Իսկ խնդիրը կայանում է նրանում, վոր բանվորները պատասխան ստանան իրենց հետադարձ խոսակցության և մեր աճման դժվարությունների դեմ մասսաները մոբիլիզացիայի յենթարկելու համար: Ձեռնարկությունում բանվորները քաղաքական որվան նշանակության են տալիս այնքան, վորքան չեն լսել դեռ հերթական ղեկուցումը: Նրանց մոտ գալիս է կառավարության անդամը, կամ ղեկավար կուսակցական աշխատողը, վորից նրանք կարող են իրենց հետաքրքրող հրատապ հարցերին հեղինակավոր պատասխան ստանալ: Ահա թե ինչու քաղաքական որը ձեռնարկությունում պետք է մեցվի մասսայական առխասանքի սխեսի մեջ:

Բանվորների պահանջները ժամանակին բավարարելու տեսակետից դրական արդյունքներ է տալիս նաև ձեռնարկությունում քաղաքական կազմակերպման հետևյալ փորձը: Փարգործկոմը 7—10 որ առաջ հայտարարում է ցեխերին, վոր այսինչ որը ձեռնարկությունում հանդես կգա կառավարության անդամը, կամ ղեկավար կուսաշխատողը: Բանվորներին առաջարկվում է որ առաջ գրավոր, թե բանավոր Փարգործկոմի միջոցով տալ իրենց հետաքրքրող հարցերը, այն պայմանով վոր հարցերը ժամանակին պետք է տրվեն ղեկուցողին: Ղեկուցողը, հարցերը ստանալով և նրանց ընդհանրացնելով, նշանակված որը պատասխանում է բանվորների հարցերին:

Ձեռնարկությունում քաղաքական կազմակերպմանը պետք է բացառիկ նշանակություն տալ: Պետք է վճռականորեն հարվածել այդ հարցի նկատմամբ տեղական կազմակերպությունների ձևական վերաբերմունքին, անձկունությունը, որլումով շինային, դանդաղ կոտուրյանը, վորոնք տեղի ունեն մեր ազիտացիոն ապարատում, առանձնապես վճռականորեն խարազանել առանձին ընկերների բյուրոկրատական տրամադրությունները, վորոնք խուսափում են ձեռնարկություններում ղեկուցումներ ինչուց, տառապում են «մասսայավախություն» և կտրվում նրանցից:

Ազիտացիոն աշխատանքի լինելը կայանում է նրանում, վորպեսզի ժամանակին մատերիալ տրվի, կոմունիստներին տեղեկացնել, ղինել նրանց, առաջին հերթին մեր աճման դժվարությունների դեմ պայքարելու համար: Դա անհրաժեշտ է, վորովհետև դազգահի առաջ կանգնած, ստորին կուսակցական և արհեստակցական աշխատանքին մասնակցող կոմունիստը, ամեն որ շփվելով բանվորական մասսաների հետ, պետք է պատասխանի նրանց հրատապ հարցերին, կազմակերպի մասսաները, հակահարված տա բանվորական հետաձայն խմբերի մեջ զջլողական և այլ տրամադրություններին: Ազիտացիոն աշխատանքի հետ մնալը ակամայից առանձին կոմունիստներին և բլիճներին աշխատանքում պատսիվություն և առաջ բերում:

Համ կ(բ) կ. Մոսկվայի կոմիտեն, նշելով բանվորական մասսաների մեջ բացահայտ անբավարար աշխատանքը՝ կազված մեր աճման դժվարությունների հետ, կուսակազմակերպության առաջ խնդիր է դրել բարձրացնել կոմունիստների ակտիվությունը և վճռականորեն հաղթանակ տալին կուսաբյուրների, կոմունիստների յեկ կոմյունիստների պատսիվորյան ղեպերը:

Իհարկե, դա կարելի չէ կատարել կուսբլիճների ամբողջ աշխատանքի բարելավման պայմանով: Սակայն ազիտացիոն ապարատի դերը դժվարությունների դեմ տարվող պայքարում կոմունիստների ակտիվությունը բարձրացնելու խնդիր լուծման մեջ՝ շատ մեծ է: Կոնկրետ որինակ: Յերբ առաջացավ մանր փողի դժվարությունը, շատ կոմունիստ

ներ, տեղերում չեյին կարողանում բացատրել այդ դժվարութեան իսկական պատճառները, իսկ հաճախ նույնիսկ բացահայտ անմիտ պատառխաններ եյին տալիս: Ազիտացիոն ապարատը հետ մնաց այդ հարցի լուսաբանութեամբ և դրանով իսկ չաջակցեց մասսաների անհրաժեշտ մոբիլիզացիային այդ դժվարութեանների դեմ պայքարելու համար: Նույնիսկ այդ կոնկրետ որինակի վրա ակնբերե և, վոր ազիտացիոն ապարատի հետ մնալը—դա այնպիսի մի թեւութուն է, վորը պետք է անհապաղ հաղթահարել: Սոցիալիստական վերակառուցման շրջանը աշխատանքի այդ տեղամասում էլ ստաջադրում է բարձր պահանջներ:

Շինարարւթյան բոլեւիկիյան տեսլիքը պահանջում է յի վազիսացիայի բոլեւիկիյան տեսլիքը: «Հնգամյակը—չորս տարում» փոխառութեանը շատ թույլ է տարածվում գյուղում: Կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպութեանները հաճախ անթույլատրելի անտարբերութեան են հայտնաբերում այդ կարեորագույն տնտեսական, քաղաքական կամպանիան անցկացնելու գործում: Բայց չէ վոր Մոսկվայի շրջանի վորոշ ուայոններում, մինչև այսօր էլ վոյ մի ազիսացիոն ճյուղեր չկան:

Մասսայական ազիտացիոն գրականութեան անաշխատանքման տեմպը դեպի գյուղը (մատչելի բրոշյուրներ, պլակատներ և այլն) իրօք, վոր միջնադարյան տեմպ է: «Մոսկովսկիյ Բարոչի»-ի հրատարակութեամբ լույս է տեսել մի մասսայական բրոշյուր մեր աճման դժվարութեանների մասին: Հարց ու պատասխանների միջոցով բացատրվում են հրատույ հարցերը: Այդպիսի բրոշյուրների սխտեմատիկ լույս ընծայելը (ամիսը յերկու անգամ, կամ տասնորյակում 1 անգամ)—մասսայական ազիտացիոն աշխատանքի լավագույն մեթոդներից մեկն է հանդիսանում:

Ազիտացիոն ապարատը յեղած մատերիալների (ժողովներում տրված գրավոր հարցեր, վիճաբանութեաններ և այլն) հաշվառման հիման վրա սխտեմատիկ կերպով հրատարակում է մատչելի բրոշյուրներ, վորոնցով բանվորները հնարավորութեան են ստանում իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները ստանալու: Պարզ է, վոր այդպի-

սի մասսայական բրոշյուրը չի կարելի ավելորդ որ պահել պահեստում, բայց, դժբաղդաբար, պրակտիկան հակառակն է ասում: Այստեղ էլ կա դանդաղկոտութեան, անձկունութեան, աշխատանքի միջնադարյան տեմպ:

Կարելի յեր շատ փաստեր բերել, ապացուցելու համար վոր ազիտացիոն աշխատանքը հետ է մնում, յեթե ընտելութեան առնենք արհմիութեանների, կոոպերացիայի, քաղութանների և հասարակական կազմակերպութեանների աշխատանքը: Ճեղքվածքները բոլոր կազմակերպութեանների առնենք: Ընդգրկվածքները մեջ բացառութեան չեն, այլ որենք: Գիտացիոն աշխատանքի մեջ բացառութեան չեն, նույնիսկ այն ժամանակ, վոր միութեանները անձկուն են, նույնիսկ այն ժամանակ, վոր հնարավորութեան ունեն մի վորեն կազմակերպութեան դրական փորձն ընդհանրացնելու և այդ փորձը ուրիշներին տալու համար: Իսկ փորձի փոխանակութեանը ունի հակայական նշանակութեան, վերցնենք «Ռուսկաբեդ» գործարանը (Պրոլետարական ուայոն), վորը մեծ ու հետաքրքիր աշխատանք է տարել բանվորներին մոբիլիզացիայի յենթարկելու բնագավառում պարենային դժվարութեանները վերացնելու գործում: Գործարանային կազմակերպութեանների ակտիվութեանը և մասսաների մոբիլիզացիան ի վերջո տվել են դրական արդյունքներ (գործարանի մաքուր ճաշարանը, հերթերի վերացումը, հսկողութեանը խոհանոցի վրա, բանջարեղենը պահպանելու նախապատրաստութեան, վերացվել է կոոպերատիվի հերթերը, վորին ամրացված է գործարանը և այլն):

Այդ կատարված աշխատանքը պե՛տ է դառնա բոլոր ֆարիկների յիվ գործարանների սեփականութեանը: Մանավանդ, վոր մենք ունենք շատ ֆարիկներ և գործարաններ, վորտեղ գործը այդ տեսակետից շատ վատ է դրված, վորտեղ չեն շատ բյուրոկրատական աղավաղումներ կան, վորտեղ չեն կատարվում բոլոր հնարավորութեանները, վորպեսզի կազմակերպվի ճաշարանը մատակարարման գործը և այլն: Բավական է նայել Չերժինսկու անվան գործարանին (Կրասնայա Պրեսնյա), «Լիվերս» ֆարիկային (Սամոզելի), վորպեսզի համոզվել դրանում: Կան գործարանային կազմակերպութեաններ, վորոնք իրենց արժանապատվութեանից

ցածր են համարում այնպիսի «մանրունքներով» զբաղվելը, ինչպեսին են գործարանային ճաշարանը, մասսայական բանվորական հսկողությունը կոոպերացիայի աշխատանքի վրա, ֆաբրիկաների և գործարանների շեֆությունը խորհրդրային ապարատի վրա: Այդ կազմակերպությունները «ժամանակ չունեն» այդպիսի «դատարկ բաներով» զբաղվելու, նրանք խոշոր պրոբլեմներ են լուծում:

Սա վերաբերվում է, իհարկե, վոչ միայն տեղական կազմակերպություններին: Կա ընկերների մի կատեգորիա, վորը դժգոհ է նրանով, վոր կոմունիստների ակտիվում քննություն են առնվում այնպիսի հարցեր, ինչպիսինն է կարտոֆելը, պամիդորը, գործարանային ճաշարանը: Ասել է, թե չի կարելի գործարանային ճաշարանով, կամ կարտոֆիլով «փոխարինել» դեպի սոցիալիզմը առաջ խաղալու մեր սկզբունքային հարցերը: Բանվորական մատակարարման կազմակերպման գործնական հարցերը—այսոր մեծ քաղաքական հարցեր են, իսկ մարդիկ թուղում են յեթերում: Նրանց հարկավոր է տատ, մեջբերում, սկզբունքային հիմունք, ընդհանուր դատողություններ:

«Վոմանք տառի յետևում կյանք են տեսնում, իսկ սա ել կյանքում տառն է տեսնում»:

Մեր ազիտացիան, իհարկե, հարցերին և՛ տալիս է սկզբունքային հիմնավորում: Կուսարանում է կուսակցության գլխավոր գծի խնդիրները, կապում է կարտոշկայի հարցը մեր՝ դեպի սոցիալիզմն առաջ խաղալու հարցերի հետ: Ինդուստրիալիզացիան և կոլեկտիվիզացիան բոլոր հարցերի առանցքն է կազմում: Սակայն սխալ կլիներ, յեթե մեր ազիտացիան սահմանափակվեր միայն մեր սկզբունքային գծի հիմնավորումով: Այն բրոշյուրը, վորի մեջ մատչելի լեզվով նկարագրած է «Ռուսսկաբել» գործարանի աշխատանքը բանվորների մատակարարման գործը բարելավելու մասին, շատ անգամ ավելի ոգուս կրերի, քան այն բրոշյուրը, վորի մեջ խոսվում է ընդհանրապես մեր դժվարությունների մասին:

Ահա այնպիսի ազիտացիան, վոր տարվում է կոնկրետ նվաճումները ցույց տալու միջոցով, փորձի այս անհրաժեշտ

փոխանակությունը—մեր ազիտացիոն աշխատանքի ամբողջ մեխանիզմի ավելի թույլ տեղամասն է: Այս բնագավառում հետ է մնում և՛ կլինոն, և՛ ռադիոն, և՛ մամուլը—մեր ազիտացիոն աշխատանքի բոլոր լծակները:

Լինինը բրոշյուրներից մեկի մասին (ընկ. Տուրոսկու բրոշյուրի) գրել է.

«Պետք է ավելի լայն տարածել այս գիրքը և ցանկանալ, վորպեսզի վորքան կարելի յե մեծ քանակությամբ աշխատողներ, վորոնք գործում են մասսայի մեջ և մասսայի հետ, կենդանի կյանքի իսկական ծոցում, իրենց փորձը նկարագրելով զբաղվեյին: Մի քանի հարյուր, կամ թեկուզ մի քանի տասնյակ որինակ լավագույն, ավելի ճշմարիտ, անկեղծ, արժեքավոր փաստացի բովանդակությամբ ավելի հարուստ այդպիսի նկարագրություններից հրատարակելը անսահման ավելի ողտակար կլիներ սոցիալիզմի գործի համար, քան թե ամեն քայլափոխում թղթի հետեւ կյանքը չտեսնող գրքի գրականագետների շատ թերթի, ամսագրային և գրքի աշխատությունները»:

Լինինի այս մտքերը կիրառելի յեն վոչ միայն մամուլի նկատմամբ:

Յեվ այս, իհարկե, որինակելի դաս է բոլոր նրանց համար, վորոնք չեն ցանկանում այսոր քննել և զբաղվել ֆաբրիկաների և գործարանների գործնական կյանքի կոնկրետ խնդիրներով, արհամարհանքով են վերաբերվում դեպի գործարանային ճաշարանը կամ կարտոֆելը, վորովհետև գործարանային ճաշարանում է «սկզբունքային» բարձունքայն բոլորը նրանց իջեցնում է «սկզբունքային» բարձունքայն բոլորը նրանց իջեցնում է «սկզբունքային» բարձունքայն: Մեր ազիտացիոն մասսայական աշխատանքի համար բնորոշ է նաև—շարունը, պահպանողականությունը, նախաձեռնությունը գլխավորելու վախը:

— Չլինի, թե մի բան դուրս գա: Հայանի բողոջը («Та-ракан») այստեղ ել իր զրոսանքն է կատարում: Բայց չե վոր աշխատանքին դիֆերենցիալ մոտեցումը, ազիտացիան կոնկրետ պայմաններում գործադրել կարողանալը, լայն նախաձեռնությունը—այս բոլորը անհրաժեշտ պայման է հաջող աշխատանքի համար: Չե վոր վորոշ հնարագետ


տնտեսավարներ փորձեցին ձևական հրամանով արգելել ձեռնարկություններում ստուգիչ թվերի քննությունը, նախ քան այդ բոլոր թվերն իրենք չձամթմեցին: Յեւ այդ այն մտմենտին, յերբ բանվորների մեջ հանդիպակաժ արդֆինպլանի գաղափարն եր հղացվել: Բայց չե վոր շատերն այդ բյուրոկրատական հրամանը կատարել են մինչև վոր այն չի փոփոխվել:

Շատերին վախն այնքան է տանջել,
Վոր նա միշտ հրամանի յե սպասում
Յեւ իր գործերը չի սկսում
Մինչև վոր թուղթ չի ստանում:

Մեր քննադատական նկատողությունները բոլորովին չեն սպառում մեր ազիտացիոն ապարատի աշխատանքի հետ կապվաժ բոլոր հարցերը: Նրանք խոսում են միայն մեր աշխատանքի թույլ կողմերի մասին, առաջադրում են մեր կարծիքով մի եական հարց: Դա—մեր ազիտացիայի վորոշ չափով հետ մնալն է մեր շինարարության տեմպերից, բանվորական մասսաների քաղաքական ակտիվության աճումից: Այս խոշորագույն թերությունը մեր աշխատանքում պետք է վորքան կարելի յե շուտ վերացնել:

Մեր բոլոր կազմակերպությունների ազիտացիոն ապարատ պեժ է վերակառուցվի համաձայն այն բարձր պահանջների, վոր առաջադրում է նրան վերակառուցման Երջանը:

Ազիտացիոն աշխատանքում հարկավոր են բոլեւմիկյան տեմպեր:



Թարգմանեցին՝ Ա. Ամիրխանյան, Տիգրան Գրիգորյան, Հ. Գ. Ժամկոչյան
Թարգմ. խմբագրեց Հ. Բարդյան Գառ. Թողարկ. է տեխ. խմբ. Ա. Արևան

Баş Мәтбуат Мудирлиги Мывәкkillиги № 4544. Բիրձәнәғр № 22 Տիғарիş 1057. Թիғ. 1850, Իстәһсалата верилмиş 16/VIII 1933. Саға верилмиş 27/VIII 1933. Сағ листи 2²/₃. Кағыз formatы 72×105. Һуғуғатың милкдағы 179752 Азәрнәғр мәтбәәсирдә басылғ. Бакы, Әли Бајрамов кыçәси „Китаб Сарайы“.

« Ազգային գրադարան »



NL0191217

90 knc.

810

RUBEN

**Kytləvi təşviqat vəzifələri
haqqında**

**(28/VII-33-çy il ymum Bakь müşavərəsində
sejlənilmiş nitq)**

**HQ (B) F MQ nəşriyyatı
Bakь - 1933**